Բանավոր պատմությունների ժողովածու

Հակագենդերային շարժումները կին ակտիվիստների խոսքով

Հինգ ակտիվիստի պատմություն

Սույն ժողովածուի համար բանավոր պատմություններ են հավաքագրվել Տաթևիկ Աղաբեկյանից, Լիլիթ Մարտիրոսյանից, Էմիլյա Նիկողոսյանից, Սոնա Գրիգորյանից և Նարե Հովհաննիսյանից:

ՀԿՀ-ն խորհին շնորհակալություն է հայտնում վերջիններիս իրենց փորձառությամբ և պատմություններով կիսվելու համար:

❋

Հարցազրուցավարներ՝ Լարա Ահարոնեան, Արփինե Ղամբարյան, Էլեն Մանգասարյան, Տաթև Բալդրյան և Շուշան Աբրահամյան

Խմբագրումը և ձևավորումը՝ Սոնա Բալդրյանի
Սրբագրումը՝ Արմինե Մարկոսյանի

❋

Բանավոր պատմությունները հավաքագրվել են Հայաստանում կանանց հիմնադրամի կողմից իրականացվող «Ֆեմպատում. ֆեմինիստական բանավոր պատմությունների արխիվ» նախագծի շրջանակներում: Այն իրականացվել է Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի ֆինանսավորմամբ:

Ավելին՝ womenfundarmenia.org

Norwegian Helsinki Committee

Երևան, 2023

Հակագենդերային շարժումները կին ակտիվիստների խոսքով

/

Հինգ ակտիվիստի պատմություն

Բովանդակություն

Մեթոդաբանություն *5*

Տաթևիկ Աղաբեկյան *7*

Լիլիթ Մարտիրոսյան *18*

Էմիլյա Նիկողոսյան *31*

Սոնա Գրիգորյան *36*

Նարե Հովհաննիսյան *47*

Մեթոդաբանություն

Սույն ժողովածուն ներառում է հատվածներ «Հակագենդերային շարժումների կողմից հետապնդումների և բռնաճնշումների ենթարկված կին իրավապաշտպաններ» թեմայով հավաքագրված բանավոր պատմություններից: Պատմողներն են իրավապաշտպանական գործունեություն ծավալող հասարակական կազմակերպություններ ներկայացնող կին իրավապաշտպանները: Տաթևիկ Աղաբեկյանը, Լիլիթ Մարտիրոսյանը, Էմիլյա Նիկողոսյանը, Սոնա Գրիգորյանը և Նարե Հովհաննիսյանը պատմում են իրավապաշտպան գործունեության ընթացքում հանդիպած խոչընդոտների՝ հատկապես հակագենդերային շարժումների կողմից թիրախավորվելու և այս մարտահրավերները հաղթահարելու փորձերի մասին:

Հավաքագրման աշխատանքներն իրականացրել են Լարա Ահարոնեանը, Արփինե Ղամբարյանը, Էլեն Մանգասարյանը, Տաթև Բալդրյանը և Շուշան Աբրահամյանը, որոնք «Ֆեմպատում. ֆեմինիստական բանավոր պատմությունների արխիվ» նախագծի հարցազրուցավարներն են:

Պատմությունները հավաքագրվել են 2023թ. հունիսից օգոստոս ընկած ժամանակահատվածում: Հավաքագրման նպատակով մշակված հարցաշարը չի սահմանափակվել միայն պատմողի աշխատանքային գործունեության մասին հարցերով, ներառվել են հարցեր նաև նրանց վաղ կյանքի, ընտանիքի, ընկերների և հասարակական այլ ոլորտների, ինչպես նաև՝ ապագայի նկատմամբ հույսերի մասին:

Հիշեցնում ենք, որ այստեղ տեղ գտած կարծիքները և ձևակերպումները կարող են չհամընկնել Հայաստանում կանանց հիմնադրամի դիրքորոշումների և «Ֆեմպատում» նախագծում ներգրավված հարցազրուցավարների անձնական կարծիքների հետ: «*Մշակութային արժեքների ներգործության արդյունքում ենք մենք առաջնահերթություն տալիս այս կամ այն իրադարձությանը, դրանք են ձևավորում մեր պատկերացումներն առ այն, թե ինչ է միֆը, պատմությունը, փաստը կամ հորինվածքը*»[1]:

[1] *Սենգսթեր Ջ. (1998) «Պատմելով մեր պատմությունները. ֆեմինիստական քննարկումներ և բանավոր պատմության կիրառումը» հոդված*

Բանավոր պատմության մեթոդը մի կողմից պատմողի, մյուս կողմից հարցազրուցավարի պատմությունն է, քանի որ վերջինիս ներկայությունն է, որ որոշում է հարցազրույցի ընթացքում հնչեցված պատասխանների բնույթը, ձևակերպումը և տոնը: Հարցազրուցավարներից ոմանք նախապես ճանաչել են պատմողներին և նրանց հետ հաստատված մտերիմ հարաբերություններ են ունեցել, իսկ ոմանք էլ պատմողների հետ հավաքագրման աշխատանքների շրջանակներում են ծանոթացել:

Սղագրություններն արվել են բառացիորեն՝ չխախտելով և չխմբագրելով պատմողի բարբառը և խոսելաոճը: Սղագրության մեջ նաև կտեսնեք պատմողի զգացմունքների մասին նշումներ: Սղագրությունները միայն կարճ հատվածներ են 1.5-2 ժամ տևողությամբ պատմություններից. դրանցից հնարավոր է պակասի կարևոր համատեքստ, որը կա՛մ խմբագրման հետևանքով է կորել, կա՛մ էլ պատմողի ցանկությամբ հեռացվել է այս հրատարակությունից:

Հասկանալով, որ միայն պատմությունների սղագրությունները ներկայացնելը կարող է խնդրային համարվել, «*չենք կարող «ապրած փորձառությունը» միայն «սղագրել», այն պետք նաև մեկնաբանենք*»[2], կարևորել ենք պատմությունների՝ ինչպես որ է ներկայացումը, որպեսզի խրախուսենք այլ հետազոտողների ու հետազոտական թիմերի այս թեմայով հետազոտություններ իրականացնել:

Անհատ հետազոտողները և հետազոտական թիմերը կարող են հայտ ներկայացնել Հայաստանում կանանց հիմնադրամին՝ ամբողջական սղագրությունները ստանալու և հետազոտություններ իրականացնելու նպատակով:

[2] *Միլս Է. (2002) «Երկու քարի արանքում. որակական հետազոտողների բարոյագիտական խնդիրները» հոդված*

Տաթևիկ Աղաբեկյան

Տաթևիկ Աղաբեկյանը «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ի նախագահն է: Սույն պատմությունը հավաքագրվել է Լարա Ահարոնեանի, սղագրությունը կատարվել՝ Ելենա Եղիազարյանի կողմից: Ժողովածուում տեղ է գտել Տաթևիկի և Լարայի խոսակցությունը հակագեն դերային շարժումների ազդեցությունների մասին:

Լարա. Հետաքրքիր ա: Հա՞: Դու քեզ տեսար էս ոլորտում ավելի:

Տաթևիկ. Հա՞: Ինձ թվում ա... Ինձ թվում ա՝ ինձ ամենասկզբից է ամենաուժեղ բանը երևի, որ... Գիտես, չգիտեմ, երևի ամենադաժան դրսևորումն ա իմ համար բռնությունը:

Լարա. Հըմ:

Տաթևիկ. Ոնց որ որտև խտրականության, անհավասարության, ամենածայրահեղ բաննա:

Լարա. Հըմ: Այո՛, երևի:

Տաթևիկ. Հետո կարող ա երևի նրա համար, որտև էստեղ էլ կարա լինի մի քիչ ավանդական ու կարծրատիպային բան մեջս, որ ոնց որ ուրիշ բաների հետ կարող ա ես էլ եմ ապրում, ինչ-որ բաների հետ ես էլ եմ ապրում, հարմարվում, կողքս տեսնում՝ լռում, բայց ոնց որ բռնությունը չեմ կարում հանդուրժեմ: Երևի մտածեցի՝ երևի ավելի բան, կարևոր բանը, որ էստեղ անելն ա:

Լարա. Հըմ:

Տաթևիկ. Մինչև վերջ հլը չեմ հասկացել, կարող ա մի քսան տարի հետո [խմբ. երկուսով ծիծաղում են] էս հարցին պատասխանեմ:

Լարա. Հետո սեռական բռնությունն ես կոնկրետ ընտրել:

Տաթևիկ. Հա՞:

Լարա. Ասենք էդ բռնությունների մեջ, էդ էլ հետաքրքիր է, որտև ոնց որ առաջիններին...առաջիններից էիր, որ էս թեման բարձրացրեց:

Տաթևիկ. Հա: Բայց, ես չէ, չէ, էդ ես չէի, որ կոնկրետ օրինակ ես չեմ հիշում, որ ես ունեցած լինեմ էդ միտքը, որ սեռական բռնության ոլորտում բան չկա Հայաստանում: Էդ ավելի շատ եկավ ձեր կողմից:

Լարա. Հըմ:

Տաթևիկ. Ը՞մ, որովհետև նաև էդ բացի մասին քո հետ էին ավելի շատ կիսվում մարդիկ:

Լարա. Հա՞:

Տաթևիկ. Մեզ էդքան չէին պատմում: Մենք ընտանեկան էինք շատ տեսնում, բայց, օրինակ, երբ որ մենք նոր էինք սկսել ճգնաժամային ը, ու առաջին, ահագին՝ դե ութ տարի մենք ընտանեկան բռնության դեպքերի հետ էլ ենք աշխատել: Նենց չի, որ իմ համար ավելի քիչ կարևոր էր:

Լարա. Հըմ:

Տաթևիկ. Ես ոնց որ իրանց տենց չեմ բանանում, բայց հետո, երբ որ երկու հազար տասնվեցից որոշեցինք, որ էլ չաշխատենք, ես շատ արդար էդ որոշումը գտա:

Լարա. Հըմ:

Տաթևիկ. Որտև, իրոք, ոչ մեկ մինչև հիմա սեռական բռնության դեպքերի հետ չի աշխատում:

Լարա. Ըհն: Այո, մնում ա շատանելիք էդ ոլորտում:

Տաթևիկ. Հա:

Լարա. Ճիշտ ա:

Տաթևիկ. Ու կարծում եմ նաև իմ բանը էս ոլորտից էլ ա, գիտես, որտև, օրինակ, չգիտեմ, մի քիչ կրթության մասով փոփոխություն կա, կարծրատիպերի մասով փոփոխություն կա, բայց որ բռնության՝ սեռական բռնության դեպքերի հարցում չկա, կարող ա նաև հենց իմ ընտրած սպեցիֆիկ ուղղությունից ա էս իմ ջղայնությունը շատանում հիմա, որ էս մասով բան չի փոխվում:

Լարա. Հըմ:

Տաթևիկ. Ու դեպքերը ավելի ու ավելի դաժան են դառնում:

Լարա. Այո: Իսկ ոնց ես քեզ պաշտպանում էդ դեպքերի... դեպքերը վարելով, անընդհատ լսելով, ի՞նչ ես անում, որ սենց չխելագարվես, չհոգնես էդ աստիճանի, որ էլ չուզենաս, ի՞նչն ա քեզ օգնում:

Տաթևիկ. Իրականում ահագին երկար ժամանակ ես չէի զգում՝ ոնց են իմ վրա ազդում էս դեպքերը:

Լարա. Ըհն:

Տաթևիկ. Ինձ թվում ա՝ ավելի շատ երկու հազ... Ահագին, ինձ թվում ա՝ մի յոթ-ութ տարի աշխատելուց հետո, ամռանը, ը՞, շատ հյուծվում էի:

Լարա. Հըմ:

Տաթևիկ. Հետո սկսեցի հասկանալ, որ ոնց որ նկատեցի, որ ամեն տարի ա տենց:

Լարա. Հըմ:

Տաթևիկ. Ը՞, կարող ա՝ կապված էր էդ մեր արձակուրդի հետ, որ ոնց որ արձակուրդից հետո մի քիչ ավելի թարմացած էի գալիս, բան, բայց, օրինակ, հուլիս-օգոստոս ամիսներին շատ ընկնում էր արդյունավետությունս՝ գործիս: Հետո նաև մի տարի՝ ինձ թվում ա՝ երևի մի հինգ տարի առաջ, մի քանի անգամ ինձ բռնեցի նրա վրա, որ հենց էդ օրը մի հատ սեռական բռնության դեպք էի լսում, ոչ թե լսում, այլ հենց անձից լսում, ամբողջ օրը գլուխս չէր աշխատում:

Լարա. Հըմ:

Տաթևիկ. Ավելի շատ օրգանիզմիս ռեակցիայից սկսեցի զգալ, որ. «Իյա, փաստորեն ազդում են էս դեպքերը իմ վրա»: Սկզբում տենց չէի զգում:

Լարա. Հա՞:

Տաթևիկ. Իրականում ինձ թվում ա՝ ինչքան ուզում ա՝ դու գնաս քո թերապիային, մեկ ա՝ իրանք ազդում են, ու ինչ-որ մի պահ ես, ը՞, ոնց որ դադարեցի...

Լարա. Հըմ:

Տաթևիկ. ...դեպքի վարում անելը: Էդ իրոք կարևոր էր, որտև մի պահ էլ չէի կարում դեպք լսեի: Հիմա, օրինակ, իրոք բան չեմ անում, տես, օրինակ, էս վերջի ահավոր վիդեոն որ տարածվեց, ես չեմ նայել: Ոնց որ, գիտես, ներսից ես հասկանամ՝ ինչ եմ զգալու, որ նայեմ, ու չեմ նայում:

Լարա. Հըմ:

Տաթևիկ. Չգիտեմ, օրինակ, էն պատերազմի ընթացքում կանանց, բան, չեմ նայել ես էդ: Ես ուղղակի ոնց որ, գիտես, ախր կարդացել եմ դրա մասին, լսել եմ, պատկերացնում եմ՝ ինչ պիտի մեջը տեսնեմ, բայց

երբ որ տեսնում ես, էդ ուրիշ ձև ա ազդում, կամ երբ որ... Հիմա, օրինակ, էս վիդեոն չեմ նայել, բայց ամեն ա առաջինը առավոտը, որ ինձ ուղարկեցին...

Լարա. Ըհն:

Տաթևիկ. ...ը՞, ասեցի՝ ինչ կա մեջը, մի քանի դրվագ պատմեց ուղարկողը, որտև ուղարկողը նայել էր արագ-արագ...

Լարա. Հըմ:

Տաթևիկ. ...արագացնելով, բայց նայել էր: Ասի՝ չէ, չեմ նայի: Առաջին մի երևի հինգ վայրկյանն եմ նայել՝ մինչև առաջին հարվածից երեխեն ընկնում ա գետնին, ու հետո դադարացրեցի, որտև, որ նայեմ, ախր, նոր բան չեմ իմանալու:

Լարա. Հըմ:

Տաթևիկ. Բայց մեկ ա՝ դեպքերը էլի ազդում են:

Լարա. Հըմ:

Տաթևիկ. Չեն կարա չազդեն:

Լարա. Ճիշտ ա: Լավ, եթե խոսենք մի քիչ, ըսենք, էս գործունեության...

Տաթևիկ. Հա՞

Լարա. ...էս հակագեն դերային բանները, որ հիշում եմ, որ քո վրա էլ շատ էին հարձակվում թե՛ օնլայն, թե՛ օֆլայն... ի՞նչ կարաս պատմես դրա մասին: Իսկ ինչպե՞ս ես դա ապրում, ո՞նց ա քո վրա ազդում:

Տաթևիկ. Իրականում ես առաջին վախի բանը ունեցել եմ «Կարմիր խնձոր»-ի ակցիայի ժամանակ: Հա՞, գիտես՝ նոր էի մտածում, «Բազմազանության» երթի մասին էի մտածում:

Լարա. Ինչ հետաքրքիր է: Հըմ:

Տաթևիկ. Բայց հետո մեկ էլ պահի տակ կարմիր խնձորը գլխիս եկավ, որտև ուզում էի հիշեի առաջին էն բլոգերի սպառնալիքը, որ գալու են, սենց են մեզ անելու և այլն: Կարմիր խնձորի...

Լարա. Հըմ:

Տաթևիկ. ...ը՞, հուղարկավորության ակցիայի ժամանակ ա եղե: Ու եկել էին իրանք, ու ես էդ օրը հիշում եմ, որ ամբողջ ընթացքում ես քայլելուց ան ընդհատ նայում էի իրան, որտև ան ընդհատ ինչ-որ ֆիզիկական բան էի սպասում իրանից: Չեմ վախեցել նենց, որ որոշեի չմասնակցել, օրինակ, հետաքրքիր ա...

Լարա. Ըհն:

Տաթևիկ. ...մտքովս էդ բանը չի եղել, որ չգնամ: Ու երկրորդ բանը «Բազմազանության» երթն ա եղել իրականում, որ ես չեմ մասնակացել, բայց:

Լարա. Հըմ:

Տաթևիկ. Ես իրականում պիտի իջնեի: Ես պիտի մի քիչ ուշ միանայի երթին ու գալիս էի երեխու հետ: Մարին մի տարեկան չկար հլը էդ ժամանակ:

Լարա. Հա:

Տաթևիկ. Ու սենց իրա բանով հագած գալիս էի: Ու ոնց որ զանգեցի, որ կոնկրետ տեղը իմանամ, որ միանամ, արդեն էդ բանը սկսվել էր՝ իրավիճակը: Ու որ զանգեցի գործընկերներից մեկին, որ տեղը հարցնեմ, ասեց՝ մի արի, եթե երեխու հետ ես:

Լարա. Հա:

Տաթևիկ. Հետաքրքիր ա, չէ՞, որ չեմ մասնակցել, բայց միշտ հուզվում եմ...

Լարա. Հըմ:

Տաթևիկ. ...էս բանը, որ մտածում եմ: Ու սենց իրանք սենց խառնված, կողքից ձեներ, բաներ, ու ինքը էդ բանը իրա վրա ասում ա՝ մի՛ արի, մի՛ արի, Տաթ, եթե երեխու հետ ես հատկապես, մի՛ արի, ստե հաստատ մի բան լինելու ա: [խմբ.՝ սկսում է հուզվել]
Ու ես ֆռացի ու տուն գնացի ուղղակի:

Լարա. Հըմ:

Տաթևիկ. Էդ նենց բան ա... Ու ես իրոք չեմ էղել ընդեղ: Էդ ոնց որ էդ բանը, թե ինչը ինչի միջով ա անցել բան, ըտենց ակտիվ բան հետո չէր եղել մեկ էլ մինչև էդ Բուկին իստի օրը: Ես, եթե ան կեղծ, շատ անձնական բաներ չեմ ստացել: Ես առաջի, մի անգամ, որ տենց շատ...

Լարա. Ի՞նչ եղավ էդ Բուքին իստի օրը:

Տաթևիկ. Հա, հեսա կասեմ: Ես, իրականում, ոնց որ հարձակումներ եղել ա քո վրա, տենց չի եղել մեզ, ինձ թվում ա՝ մեզանից ոչ մեկի վրա: Ը՞, ավելի ոնց որ սենց սպառնալիքները գալիս էր էդ կազմակերպության վրա, բայց որպես ան հատներ մեզ էդքան չէին կպնում: Մի քանի ռոլիկների մեջ եմ ինձ տեսե: Մի անգամ, էն որ մի քանի տարի առաջ Սոռըսի հիստերիան էդ սկսեց...

Լարա. Հըմ:

Տաթևիկ. ...էդ ժամանակ մի քիչ բաներ էր սկսե, խոսակցություններ. օրինակ՝ կիսուրենցս հարևաններից մեկն էր իմ հետ կապված խոսակցություն սկսել:

Լարա. Հըմ:

Տաթևիկ. Բա Տաթոյին էլ տեսանք, ինքն էլ ա, հա, փաստորեն սոռըսական, բան-ման:

Լարա. Հըմ:

Տաթևիկ. Բայց ամուսնուս ընտանիքը հակադարձել էր, ասել էր՝ ը՞... Իսկ իրանք չգիտեն՝ էդ ով ա, Սոռոս ա, Սոռոս չի, ես ստացել եմ ըտեղից գումար, չեմ ստացել բան: Բայց զուտ իմ անձի բանով ասել էր, որ ա՞, հիմար բաներ ա, պարզ չի, էդ հիմար բաներ ա: Իրանք, ոնց որ ինձ ճանաչելով հասկացել էին... Էս հաճելի զգացողություն ա:

Լարա. Հըմ:

Տաթևիկ. Գիտես, որ չիմանալով, բայց գործդ չիմանալով, գոնե քեզ իմանալով բաներ էին արել: Չգիտեմ՝ Բուկինիստի օրը շատ վախենալու էր իրականում, ոտրև ընտենց տղամարդիկ վախենալու են: Հետաքրքիր ա, գիտես, էս բանը:

Լարա. Հըմ:

Տաթևիկ. Որովհետև մեկ ա՝ ես հիմա մտածում եմ, որ ան ընդհատ տղամարդկանց կողմից կա էդ բանը:

Լարա. Հա:

Տաթևիկ. Օրինակ՝ կարանալին են կանայք վատ բաներ խոսող, բայց չգիտեմ ինչի՝ կանանցից ես ֆիզիկական սպառնալիք չեմ զգում:

Լարա. Հըմ:

Տաթևիկ. Վտանգ չեմ զգում: Իսկ կան...էդ օրվա, ինձ թվում ա, եթե կանայք էդքան եկած լինեին, էլի էդքան վախենալու չէր լինի, ինչքան տղամարդիկ: Շատ բան էր, շատ-շատ էին էդ օրը: Ը՞...

Լարա. Իսկ ի՞նչ էր էդ օրը, ի՞նչ էիք կազմակերպել, ինչ-ինչ... Մի քիչ, եթե պատմես:

Տաթևիկ. Մի հատ ներկելու գրքույկ էինք տպել: [խմբ. ծիծաղելով] Հետո գրքի շնորհանդես կոչվեց, ընդամենը երևի մի տաս-տասներկու

էջանոց՝ «Իմ մարմինը անձնական է», ը՞, ու շատ պրիմիծիվ տեղեկատվությամբ մեջը: Ես իրականում էդ օրվանից հետո շատ ակտիվ տարածում եմ էդ գիրքը ու ամենտեղ խոսում եմ ու չեմ տեսնում էդ դիմադրությունը: Բայց էդ օրերին...

Լարա. Ի՞նչ էր նպատակը էդ գիրքին:

Տաթևիկ. Ը՞, ավելի ծնողներին օգնել, երեխաների հետ խոսել մարմնի սահմանների մասին: Ընդամենը անձնական... անձնական հասկացողության, հա՞, ու շատ հասարակ ձևով: Օրինակ՝ չգիտեմ, ատամի խոզանակը քո անձնականնա, եթե նամանկի վրա քոանունը... Շատ պրիմիծիվ: Մենակ մեջը նաև կար մի քիչ ինֆորմացիա, որ եթե երեխայի... Երեխան չի ուզում, որ իրա մարմնին կպնեն, իրան համբուրեն, իրան գրկեն, դու չպիտի դա խրախուսես, եթե անգամ դա մտերիմ բարեկամի կողմից ա: Հա՞, ոնց որ ավելի ծնողին սովորացնել՝ ոնց երեխու՝ գոնե մարմնի սահմանները պաշտպանի, երբ որ երեխեն հլը չի կարողանում դա անի, ու, իհարկե, էդ անելով ինքը սովորացնում ա, որ դա պետք ա անել:

Լարա. Հա՞:

Տաթևիկ. Վերջում ընդամենը երկու էջ կար, որի վերը սև մեծ գրած էր, որ դա միայն ծնողի համար ա, և մեջը կար սեռականություն կետ օրգ[3] կայքը նշված:

Լարա. Հըմ:

Տաթևիկ. Բայց բացի դրանից՝ նաև գրքույկը նախատեսված էր երեքից վեց տարեկան երեխաների համար, ովքեր Հայաստանում կարդալ չգիտեն:

Լարա. Ըհն:

[3] serakanutyun.org

Տաթևիկ. Այսինքն, էնքան... էս ես հետո իրականում շոկի մեջ էի նաև նրանից, թե ինչ մանիպուլյացիա գնաց, որովհետև ժողովուրդը ինքը ընգավ դրա մեջ:

Լարա. ... Չեմ հասկանում

Տաթևիկ. Ու մեկը ժողովրդի մեջ չասեց, որ բայց, ժողովու՛րդ, իրեք տարեկան երեխեն կարդալ գիտի՞, որ էս գիրքը կարդա:

Լարա. Ըհն:

Տաթևիկ. Այսինքն, օրինակ, էդ շահարկվեց: Էրեխեքին մեր ինչ են տալիս, բայց դա երեխուն չես տալի, ծնողին ես տալիս, ծնողն էլ գիտակից մարդ ա, կարդում ա. չի ուզում, թող չն երկայացնի: Ուզում ա մենակ նամակի մասը ներկայացնի, թող նամակի մասը ներկայացնի: Էդ մի բանն էր: Երկրորդը՝ շատ աբսուրդ բաներ, որ պղծում են երեխեքին, տներից մեզ... Լրիվ նենց բաներ, որ ընդհանրապես գրքի հետ կապ չուներ:

Լարա. Հըմ:

Տաթևիկ. Անգամ այսինքն բան չկար էլի, որ ասեմ մի միտք մի քիչ զգուշ էինք ձևակերպել, բայց ուրիշ մտքին ը... Չկար էդ բանը:

Լարա. Հըմ:

Տաթևիկ. Ժամանակն էր տենց: Մանիպուլյացիա պետք ա արվեր, արվեց:

Լարա. Հիշում եմ, որ մասնագետներ էլ կային լավ, սենց...

Տաթևիկ. Հա՞:

Լարա. Էդ մի քիչ բան էր, չէ՞:

Տաթևիկ. Իմ համար աբսուրդ ա նաև էն, որ եթե, օրինակ, կա Հայաստանում երկու ակտիվիստ, ում անունը ժողովուրդը գիտի: Ցանկացած բան, որ լինում ա, կապվում ա էդ մարդկանց հետ:

Լարա. Ըհն:

Տաթևիկ. Այսինքն՝ ես անձամբ էի գրքի վրա աշխատել էս դեպքում գոնե:

Լարա. Հըմ:

Տաթևիկ. Ու «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի» անունով էր էդ գիրքը, բայց միևնույն ա՝ կապվում ա ԿՌԿ-ի և Լարայի անվան հետ, որ, ախր, ի՞նչ կապ ունեն:

Լարա. Հըմ: Պարզ ա:

Տաթևիկ. Հա ու էդ ավելի շուտ էինք սկսել հիասթափվել էս երկրի «գիտնականներից»:

Լարա. Հըմ:

Լիլիթ Մարտիրոսյան

Լիլիթ Մարտիրոսյանը «Իրավունքի կողմ» ՀԿ-ի նախագահն է: Պատմությունը հավաքագրվել և սղագրվել է Արփինե Ղամբարյանի կողմից: Ժողովածուում տեղ են գտել Լիլիթի վկայությունները 2019թ. ԱԺ-ում նրա ելույթին հետևած ատելության տարափի վերաբերյալ:

Լիլիթ. ԸՀՆ: Մեզ հասարակությունը որպես հավաքական կերպար ա նայում՝ LGBT-ն: Բայց մենք ուզում եմ ասել՝ մենք ան հատներ ենք, ով ունենք տարբեր մոտեցումներ, տարբեր դրսևորումներ: Մեկը, օրինակ, արվեստագետ ա, մեկը արհեստին ա տիրապետում, հմ՝, ինչքան մարդիկ կան, ինչ համաշխարհային, որոնք որ ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչներ են եղել, ու իրանք արարել են:

Արփինե. ԸՀՆ

Լիլիթ. Իրանք թելադրել են էն հետերոսեքսուալ մասսային, որ արվեստը սայա

Արփինե. ԸՀՆ

Լիլիթ. Կամ, չգիտեմ, կյանքը սայա:

Արփինե. հմ

Լիլիթ. Իրավապաշտպանությունը սայա:

Արփինե. ըմմ որովհետև իրանք շատ նայում են մի մարդու մի հատկանիշը, հա՞, մարդու սեռականությունը,

Լիլիթ. հա

Արփինե. իրա գենդերային ինքնությունը, հա՞: Իրանք չեն նայում՝ մարդը ինչքան տարբեր գույներ ունի իրա մեջ:

Լիլիթ. Հասարակությունը մեզ գերսեռականացնում ա, էդ գերսեռականությունն էլ իրանից ներկայացնում ա մի շարք հա... Նայում ա միայն սեքսի տեսանկյունից,

Արփինե. Ըհն

Լիլիթ. սեռականության տեսանկյունից: Ը,՛ ես Ձեզ մի բան ասեմ, ես իմ կյանքում կարող ա, չգիտեմ, էդ սեռական հարաբերությունների մեջ շատ քիչ

Արփինե. Ըհն

Լիլիթ. մտնեմ ինչ որ մեկի հետ:

Արփինե. հմ

Լիլիթ. Իմ համար կարող ա հոգևոր կապը ավելի կարևոր ա,

Արփինե. իհարկե, ըհն

Լիլիթ. բոլորին չի կարելի էդպես, թիրախավորել:

Արփինե. ը՛ - (թվաց, թե վերջացրել է խոսքը) հա

Լիլիթ. Իմ, ը՛, ես միշտ խուսափել եմ քաղաքականությունից,

Արփինե. Ըհն

Լիլիթ. բայց ես հավատացած եմ, որ գալու ա ժամանակաշրջան՝ կամ ես, կամ իմ գործընկերներից ինչ-որ մեկը, ով իրավապաշտպան ա, հայտնվելու ա քաղաքական դաշտում:

Արփինե. Ըհն

Լիլիթ. Ու էն քաղաքական դաշտում, որի... որտեղ որ բարձրաձայնվելու ա ԼԳԲՏ անձանց թեմաները,

Արփինե. Ըհն

Լիլիթ. որ ինքը, էդ մարդը՝ մարդիկ, ը,՛ խոսելու են ԼԳԲՏ անձանց նկատմամբ խնդիրների մասին ու սկսելու են դրանք վերացնել Հայաստանից:

Արփինե. Ըհն, ըհն

Լիլիթ. Պետք ա մեկը,

Արփինե. Իհարկե

Լիլիթ. ... բաց դեմքով, ով պետք ա, ըմմ, նույն կարող ա՝ Ազգային ժողովում, նույն կարող ա, չգիտեմ, Կառավարությունում, ով պարբերաբար պետքա ԼԳԲՏ համայնքի հարցերը բարձրաձայնի:

Արփինե. ըհմ: Չէ, Հայաստանը ինքը սենց շատ դանդաղ ա գնում, որովհետև սենց նոր մտնում ա, որ կան այք կարան մտնեն քաղաքական դաշտ, կարող են լինել Պառլամենտում, էս հլը սկիզբն ա էլի: Բայց ես էլ էդ հարցի մեջ հույս ունեմ, որ, իրոք, ինչ որ բան փոխվելու ա, ու սենց ավելի ազատամիտ ենք դառնալու: Որովհետև եթե չլինի մարդ, ով որ խոսում ա իր խնդիրներից, իրա խնդիրներին ոչ ոք չի ան դրադառնալու:

Լիլիթ. Ը,՛ տրանս անձինք Հայաստանում ապրում են խայտառակ իրավիճակում,

Արփինե. Ըհն

Լիլիթ. ըմմ, ոչ մարդկային կյանքով:

Արփինե. Ըհն

Լիլիթ. Զրկված փողոց դուրս գալուց, զրկված սրճարաններ, ռեստորաններ, փաբլիք տեղերից: Զրկված են ընտանիքի հետ հարաբերություններից: Էս հիմա ինչի համար եմ ասում, իմ համար

հաղթանակ ա, որովհետև 95% տրանս մարդիկ իրանց ընտանիքների հետ չեն ապրում...

Արփինե. Ըհն

Լիլիթ. ... որովհետև լքված են, իրանց ընտանիքի անդամները իրանց չեն ընդունում: Որովհետև որպես պետություն՝ էս պետությունը լիքը անելիքներ ունի՝ սկսած էն ամենատարրական կրթությունից:

Արփինե. Ըհն

Լիլիթ. Ինչու՞ համար, օրինակ, դպրոցներում չեն սովորացնում սեռականություն, սեռական կողմորոշվածություն, գենդերային ինքնություն, մարդու իրավունքներ առհասարակ:

Արփինե. Վախենում են ու շատ հիմար փաստարկներ են բերում, թե ինչի են վախենում:

Լիլիթ. Ը՛, ես կարծում եմ, որ էդ վախն ա իրանց, ը,՛ այ որ ասում են՝ պետք ա մեկը լինի, էդ մարդը պետք ա լինի ան վախ, ով պետք ա բարձրաձայնի էս ամեն ինչի մասին:

Արփինե. Ըհն

Լիլիթ. Այո, դա պետք ա լինի պատերազմների առ... թեկուզ պատերազմներով, բայց պետք ա լինի կրթություն տալը հասարակությանը: Դա շատ կարևոր է: Հիմա ամբողջ բեռը ընկել ա քաղհասարակության ներկայացուցիչների վրա,

Արփինե. Ըհն

Լիլիթ. իմ, Ձեր նման ակտիվիստների, որոնք, օրինակ, ինչի համար ես պետք ա, ներտազատաբան ճարեմ՝ էն դոկրին ոլոգ գտեմ, այլ ոչ թե պետք ա դա ան ի Առողջապահության նախարարությունը:

Արփինե. Իհարկե

Լիլիթ. Մենք էսօր խի՞ պետք ա պաշտպանված չզգանք, մենք իրավաբան տրամադրենք, փաստաբան տրամադրենք, որ երբ որ դա պետք ա ան ի պետությունը՝ պաշտպանելով իր քաղաքացու իրավունքները:

Արփինե. Ըհն

Լիլիթ. Ամբողջ պետության պարտավորվածությունը: Էդ ամեն ինչին էլ պլյուս՝ մենք ենթարկվում ենք հանրային պարսավանքի, խտրականության, ը՛

Արփինե. Ամեն ավատ բառերը...

Լիլիթ. ուղղակի ես ակտիվիստ եմ, ու դա իմ հոգու ներսից ա գալի: Ես չեմ ասում ակտիվիստ ու էրկու տարի հետո մոռանում դրա մասին: Տարին եր շարունակ պայքարում ու պայքարելու եմ՝ ան կախ էս ամբողջ հանգամանքից:

Արփինե. Ըհն

Լիլիթ. Ըմմ, սկսած Ազգային ժողովի ելույթից հետո, երբ որ մի խումբ ան ձիք մորթելու կոչեր էին անում, սպանելու: Այդ թվում՝ իմ տան հասցեն էր հրապարակվել, մարդիկ իմ տեղն էին գտել, ես տեղափոխվեցի, իմ ընտանիքին հարևանները էին զանգել, իրանց սպառնացել,

Արփինե. Ըհն

Լիլիթ. ը՛ էն որ փողոցում ես մինչև հիմա չեմ կարողանում դուրս գամ Նստեմ ինչ որ մի հանրային տեղ

Արփինե. Ըհն

Լիլիթ. Որովհետև դա իմ համար վտանգավոր ա: Մի անգամ մի հատ ընտանիքի հայր, ը՛ էդ Ազգային ժողովի ելույթից հետո՝ երկու

տարի առաջ, նստած էի մի հատ սրճարանում՝ քովիդից առաջ էր: Նստած էի սրճարան ու... չէ՛, քովիդից հետո էր: Նստած էի սրճարան, ու էդ հայրը վերցրեց ըտեղի քարը, ուզում էր խփեր ինձ: Էս ամեն ինչի արդյունքում ես էլի շարունակում եմ իմ պայքարը: Ես մի շարք առաջարկներ եմ ստացել Եվրոպայից, Ամերիկայից, որ կարող եմ գնալ էն տեղ ապրեմ:

Արփինե. Ըհն

Լիլիթ. Բայց ես չեմ գնում:

Արփինե. Ըհն

Լիլիթ. Ոստիկանությանն էլ կուզեմ ասեմ, որ ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչները ապահովված չեն: Սա խայտառակություն ա: Ոստիկանությունը փոխանակ պաշտպանի ԼԳԲՏ անձանց շահերը, մտնում ա ակումբներում, որտեղ հենց ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչներն են հավաքված որպես, ը,՛ մշակութային տեղ, հենց էն տեղ են թիրախավորում, բերում են էն պիսի բաներ, որտեղ հասարակության ը կշեռքի, այսինքն՝ կտրամադրի ԼԳԲՏ անձանց դեմ: Ի՞նչ են անում՝ ասում են թմրանյութ են օգտագործում,

Արփինե. Ըհն: Նույն բանը էլի՝ Պոլիգրաֆի...

Լիլիթ. Նույն Պոլիգրաֆը, նույն էս մյուս վերջի դեպքը, օրինակ, ակումբների: ը՛ այսինքն թիփախավորում է սկսել ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների:

Արփինե. Ըհն

Լիլիթ. Ես իմ կյանքից ասեմ, որ ես չեմ ուզում Եվրոպայում կամ Ամերիկայում ապրեմ: Ես ուզում եմ մնամ ստեղ, էստեղ էդ իրավունքները պաշտպանեմ: Ը,՛ երբ որ ինձ առաջարկում են Ազգային ժողովի դեպքերից հետո տեղափոխվել Ֆրանսիայում

ապրել, և իմ համար ամեն ինչ ստեղծված էր անվտանգության, ես մերժեցի, ասեցի՝ լավ, ես գամ ստեղ, լավ ապահով ապրեմ, բա էն մյուս համայնքի ներկայացուցիչն ե՞րը: Այսինքն, որպես ակտիվիստ՝ դուք ձեզ մեջ պետք ա մեծ ուժ ունենաս: Իսկ էդ ուժը ես կապում եմ Աստծու տված ուժին:

*****

Արփինե. Էդ գաղափարը ինչպես եղավ, ոնց որոշեցիք, որ պետք ա բարձրաձայնվի էս խնդիրը ու, ը՛, ինչ էիք փորձում հասնել դրանով: Հույսեր ունեիք, որ ինչ որ բան փոխվելո՞ւ է ձեր ելույթից:

Լիլիթ. Ես հասա Ազգային ժողով (թեթևակի ծիծաղում է),

Արփինե. ըհմ

Լիլիթ. ունեցա ելույթ: Ըմմ (դադար) ես միշտ, ը՛, մարդկանց մեջ ես ինձ համարում եմ motivation speaker...

Արփինե. Ըհն

Լիլիթ. ... ու մարդկանց մոտ լիքը բաներ եմ փոխել:

Արփինե. Ըհն

Լիլիթ. Ես էս քայլով էլ լիքը բաներ փոխեցի: Երբ որ ես... հա, իմ կյանքը շատ վտանգավոր էր, իմ ընտանիքի, կազմակերպությունը lockdown էր անցել, շատ վտանգա... ես անգամ տաս օրով երկիրը լքեցի իմ ընտանիքի հետ միասին, հետո հասկացա, որ էդ

Արփինե. Ըհն

Լիլիթ. Հայաստանն ա իմը

Արփինե. Ըհն: Ելույթից հետո լքեցի՞ք:

Լիլիթ. Այո՛, ելույթից հետո լքեցի: Ստիպված լքեցի, որովհետև տանս հասցեն արդեն հրապարակել էին ու մեքենաների էին պտտվում տարբեր,

Արփինե. Ըհն

Լիլիթ. ան ծանոթ մարդիկ էին արդեն գալիս, ես շատ էի վախեցել: Անգամ եթե ոստիկանությունը... ոստիկանությունը նախ բան էր անում՝ հերթապահություն էր սահմանում իմ տան մոտ, սակայն ես էդքան, կներեք, բայց ոստիկանության չեմ վստահում:

Արփինե. Ըհն

Լիլիթ. Ը,՛ շատ դժվար էր, բայց միևնույն ժամանակ, երբ որ ես էդ քոմենթները նայում էի, նամակները, էդ դուք պակերա... էդ շրջանում ես ստացել եմ միլիոնից ավելի նամակներ: Ոչ միայն Հայաստանում, որովհետև դրա մասին գրել ա The Guardian-ը, BBC Radio-ն, CNN-ն ա դրա մասին ասել, էն տեղ, չգիտեմ, բոլոր միջազգային թերթերը դրա մասին էին գրում: Ու անգամ Ֆրանսիայում տեսա իմ նկարով էդ առաջին էջում էդ սփիչի վերաբերյալ բանը՝ թերթերի մեջ էի արդեն հայտնվել:

Արփինե. Ըհն

Լիլիթ. Իմ համար սա հաղթանակ էր, բայց միևնույն ժամանակ՝ իմ կյանքի վրայով անցնող հաղթանակ:

Արփինե. Ըհն

Լիլիթ. Այսինքն՝ ես իմ կյանքը դրեցի դա հաղթանակ-

Արփինե. Ըհն

Լիլիթ. Շատ էին աջակիցները: Ես զարմացա: Նենց մարդիկ էին գրում, նենց մարդկանցից եմ ես նամակներ ստացել՝ էն մարդկանցից,

ովքեր տարիներ շարունակ փակ են ապրել. «Մենք հոգնել ենք, դու ճիշտ ես անում: Վերջ, ես էսօրվանից գնում եմ մերոնց սաղին ասեմ, որ ես ով եմ»:

Արփինե. Ըհն

Լիլիթ. Ես, էնքան էր էտի ինձ ուժ տալիս էդ աջակցությունը: Եվ միևնույն ժամանակ՝ կարենեցբաներ, որոնք որ ինձ մեղադրում էին, որ ես ի՛նչ եմ արել, պղծե՛լ եմ, Ազգային ժողովն էին բերել, որ պետք ա խնկարկեին:

Արփինե. հա (անլսելի)

Լիլիթ. Էդ ինչ խայտառակ էր էդ ընթացքում,

Արփինե. իսկ

Լիլիթ. անգամ էդ, ներողություն, անգամ էդ ելույթը ակումբներում հիթ ա դառել, անընդհատ էդ DJ-ները էդ ելույթի բանն են դնում:

Արփինե. (ծիծաղում է)

Լիլիթ. Հա: Ես չեմ փոշմանում, Արփի ջան: Ես անելու եմ երկրորդ անգամ, երրորդ անգամ ու արդեն ուրիշ բարձ... ավելի բարձր ամբիոններից:

Արփինե. Ըհն: Իսկ, ը՛, ոնց մտա, հա՞, Աժ, ոնց հետո Նաիրայի ելույթը մի հատ էլ լսեցի, որ ասում ա մեր օրակարգում սենց բան չկար

Լիլիթ. Ը՛ (արտաշնչում է) հայտատարվել էր մարդու իրավունքների լսումներ՝ նվիրված լսումներ, որտեղ հրավիրվել էին քաղհասարակության ներկայացուցիչներ, դեսպանատներ և այլն: Մարդու իրավունքների մասին ա խոսքը, չէ՞:

Արփինե. Ըհն

Լիլիթ. Մենք ինչ ենք անում՝ կարողա՞ չգիտեմ նույնպես մարդու իրավունքներ:

Քաղհասարակության որպես քաղհասարակության ներկայացուցիչ ես

մասնակցեցի: Հա ես մասնակցեցի, նախ ուղարկեցի, որ Իրավունքի

կողմից եմ, Լիլիթ Մարտիրոսյանն եմ և այլն: Ու մասնակցեցի

հանդիպմանը: Թեմաները՝ դատաիրավաբանական բարեփոխումներ,

ը՛մ ինչ-որ...

Արփինե. հաշմանդամների

Լիլիթ. հաշմանդամների, հա, ու և այլն: Իմ ելույթը ամբողջությամբ տեղավորվում էր դատաիրավաբանական բարեփոխումների մեջ: Մարդու իրավունքների լսո՛ւմ էր:

Արփինե. Ըհն

Լիլիթ. Ես շատ ուրախ եմ, որ Նաիրան այլևս չի աշխատում, ու ավելին ասեմ՝ նա բացել ա ինչ-որ հասարակական կազմակերպություն,

Արփինե. (ծիծաղում է)

Լիլիթ. դառել ա քաղհասարակության ներկայացուցիչ (ժպտում է):

Արփինե. Ըհն

Լիլիթ. Ը՛, ու ասեմ, հա, ես հայտնվեցի էդտեղ ո՛ւ մնում էր ընդամենը քառասուն րոպե՝ ավարտվեր ամբողջ լսում... էդ հանդիպումը,

Արփինե. Ըհն

Լիլիթ. վերջին չորսը անձից, չորս ան.. նախքան էդ բերեցին թղթեր տվեցին քարտուղարությունը, երբ որ լրացրեցինք, հա: Ինչ թոփիկով՝ ես գրել էի գենդերային հավասարություն և այլն: Վերջին չորս անձն էինք մնացել, և երկրորդը ես էի: (դադար) Ու էդ

պահին նույնպես, հա, սենց իմ մեջ մի հատ բան էր, որ Աստված ջան, եթե դու կարծում ես, որ ես պետք ա ելույթ ունենամ, ուրեմն պետք ա ելույթ ունենամ:

Արփինե. Ըհն, հա

Լիլիթ. Ու ունեցա: Որովհետև վերջի չորսն էինք: Կարայի՞ առհասարակ ելույթ չունենայի: Դա ուրեմն պետք էր: Պետք էր, ու արեցի ես:

Արփինե. Իսկ դրանից անմիջապես հետո արձագանքը ո՞նց եղավ: Ես լսեցի Նաիրայի սփիչը, բայց դրանից հետո, որ դուրս էկաք, գնացիք, չգիտեմ...

Լիլիթ. Ես դուրս էկա (դադար), մի քիչ միջանցքում խոսեցինք, որ սխա՛լ էր, մարդու իրավունքների լսումնե՛ր էր և այլն: Ուզում եմ էս դեպքում էլ առանձնացնեմ՝ ապրեն մեր ակտիվիստները, որոնք իմ կողքին էին:

Արփինե. Ըհն

Լիլիթ. Մենք դուրս էկանք, էդ մեծ աջակցություն էր: Ես ելույթից հետո գնում էի, որ նստեի: Երբ որ ես հասկացա- ես չէի հասկանում՝ ինքը ինչ ա խոսում:

Արփինե. Ըհն

Լիլիթ. Ես... դա իմ մոտ շոկ էր: Ես չէի հասկանում՝ ինչ ա, ինչ ա կատարվում: Հետո երբ որ հասկացա, որ բանը՝ «Երբ որ ձեզ կլնե՛ր հարթակ կտրամադրեինք, բան

Արփինե. որ «խտրականություն չկա...

Լիլիթ. հա «խտրականություն չկա Հայաստանում[4]» և այլն: Մենք դուրս էկանք, հենց էդ սրահում ես մի քիչ կանգնեցի, խոսեցինք: Ես չէի

[4] *Ցիտում են Նաիրա Զոհրաբյանին*

մտածի, որ սենց կլիներ: Ես անգամ դուրս եմ էկել Ազգային ժողովից, տաքսի եմ պատվիրել ու էկել եմ տուն: Էկա տուն, հեռախոսս դրված էր, ես TV էլ չէի միացնում ու ես SAS սուպերմարկետից ուտելիք պատվիրեցի: Մինչև կբերեին `լոգանք և այլն և այլն: Երբ որ դուռը բացում եմ, տեսնում եմ՝ էս տղեն ուշադիր սենց ինձ ա նայում:

Արփինե. (թեթևակի ծիծաղում է)

Լիլիթ. Չեմ հասկանում՝ ինչ ա կատարվում: Հենց էդ նույն տղան էլ Ֆեյսբուքում գնացել էր ասել էր՝ Լիլիթ Մարտիրոսյանի տան հասցեն գիտեմ, ու սկսել էր լիքը մարդկանց բաժանել: Դա վտանգ էր իրենից ներկայացնում, որովհետև արդեն տան տեղը գիտեին: Երբ որ էդ ուտելիքը ձեռիցս դրեցի սեղանին, ը՛, ծելեվիզրը միացրեցի, թեքում եմ՝ ես եմ, ես եմ, ես եմ, հեռախոսն եմ միացնում՝ գմփում ա, նամակներ ա, որ գալիս ա սենց ուղղակի: Մեկը գրում ա՝ ես հպարտանում եմ քեզանով, դու լիքը բան փոխեցիր, մեկը գրում ա՝ մենք քեզ սպանելու ենք՝ որտե բռնենք, դու մեր ազգի սենց (դադար): Ես մի շաբաթ հաց չեմ կերել:

Արփինե. մ՛

Լիլիթ. Ինձ հաց էին բերում... ես մենակ ջուր էի խմում,

Արփինե. հա

Լիլիթ. Նիհարել էի ահավոր, շատ վատ էի: Սենց գույնս քցած, անընդհատ թուլանում էի, որովհետև չէի կարում էդ ատելության մեջ: Չէր լինում ուղղակի:

Արփինե. մ՛

Լիլիթ. Իմ ընկերներն էին գալիս ինձ ծաղիկներով, խաղալիքներով, ամեն ինչով, սենց, ը՛, փորձում էին ինձ ուժ տային (ժպտում է)

(դադար): Ես լացում էի էդ առաջի օրը սենց, ծանոթներս սենց ծաղիկներով մտնում էին, ը՛, չգիտեմ քաղցրավենիքներով մտնում էին, բան, էն որ սենց նայում եմ, ասում եմ՝ էրեխե՛ք լավ էլի, հիմա ես մեռնում եմ, դուք էս ի՞նչ եք անում: Ասում էին. «Չէ՛, դու չես պատկերացնում՝ դու ինչ ես արել»:

Էմիլյա Նիկողոսյան

Պատմությունը հավաքագրելու պահին Էմիլյա Նիկողոսյանն աշխատում էր «Փինք» ՀԿ-ի մարզային համայնքային կենտրոններից մեկում որպես համայնքային աշխատող: Պատմությունը հավաքագրվել և սղագրվել է Էլեն Մանգասարյանի կողմից: Ժողովածուում տեղ են գտել Էմիլյայի փորձառությունները և մտորումները պահպանողական հասարակությունում աշխատանքի և հասարակական ճնշումների մասին:

Էլեն. Որպես համայնքային աշխատող՝ քեզ պատասխանատու ես զգո՞ւմ էդ մարդկանց համար, էդ զգացումը կա՞ մոտդ, որ դու իրենց համար պատասխանատու ես:

Էմիլյա. Մեր մոտ ընբես է, որ մենք ինչխոր մի հատ ըդպես մեծ ընտանիք էղնինք: Մեկ-մեկիմ ու կոլեգայիս համար ինչխոր էդ ռեսուրս կենտրոնը մեր էրեխեն էղնի: Գնացել ենք, սկզբից սաղ դասավորել ենք, զարդարել ենք, մարդկանց ենք բան էրել՝ կանչել: Ինչխոր շատ-շատ տաք զգացողություններ ունիմ էլի, էդ տեղի հետ կապված ու ըտեղ էղած մարդկանց հետ կապված: Ու ինչխոր, չգիտեմ, իրանք օրվադ կեսն են, դու իրանց հետ ես, ու շատ-շատ մոտիկ կընդունես իրանց, շատ դժվար է էլի մեկ-մեկ առանձնացնել քո անձնական կյանքդ ու գործդ, մանավանդ որ [*նշում է քաղաքի անունը*] էլ շատ փոքր է, կռնա ըտեղ էկող մարդկանց հիսուն տոկոսը քո ընկերներդ էղնին, զուգընկերդ էղնի կամ, չիդեմ, քո ընկերոջդ ընկերները էղնին, ու էդ սահմանները պահելն էլ է շատ դժվար մեկ-մեկ, որ իմս քուկդ չէ, քուկդ իմս չէ, էդ պահով: Բայց պրակտիկայից շատ կուգա էդ պահը, որովհետև երբ որ մենք սկզբում

կաշխատեինք, հեչ բան չէինք հասկնա, типа ինչխ պիտի շփվեմ էս մարդու հետ, բայց հետո կհասկնաս, որ չէ, մե րոպեմ, դու միշտ շատ կուգաս, օքեյ, մենք լավ հարաբերությունների մեջ ենք, բայց եթե մենք ստեղ ունինք հստակ կանոններ, *[տվյալ հատվածը կրճատվել է պատմողի ցանկությամբ]:*

Էլեն. Քո մոտ էդ ո՞նց ա ստացվում, դժվա՞ր ա, հե՞շտ ա սահմաններ դնելը:

Էմիլյա. Օյ, սկզբում շատ դժվար էր, էնքան վատ կզգայի: Էնպես կզգայի, որ լուրջ փոխվիմ գը, շատ հոգնած եմ ան ընդհատ, բայց հիմա, չիդեմ, ավելի լավ է, ավելի օքեյ է, հմի ինչխոր պրակտիկայի վրա լիքը բան կսովրիս էլի ամեն դեպքում: Հմի ավելի օքեյ է, բայց էն ժամանակ որям ծանր կտանեի: [Տվյալ հատվածը կրճատվել է պատմողի ցանկությամբ]... լիքը-լիքը խառը բաներ կկատարվեր, բայց հմի ինչխոր ավելի օքեյ է, ամեն ինչ հմի ավելի հանդարտ է, մենք էլ ինչխոր արդեն ունինք տեսլական՝ ինչխ շարժվինք, ինչ ա պետք անել էլի, ինչխոր ժամանակի ու փորձառության հետ ամեն ինչ կգա:

Էլեն. Իսկ որտեղից ան ընդհատ էդ burnout-ից խոսում ես, էդ խառը վիճակներից, որ առաջ էղել ա, ինչ մտքեր ա դա մոտդ առաջացնում կամ քեզ որ ուղղությամբ ա տանում: Օրինակ՝ չգիտեմ, էս ամեն ինչը թողել գնալ կամ մնալ:

Էմիլյա. Ես вообще դրա մասին կմտածեի՝ թողնել էրթալու, բայց հմի չէ, ես ընձի կսեմ մերսի, որ չեմ թողել գնացել, որովհետև բան է էլի՝ քեզի ավելի տոկուն կսարքե, ավելի հստակ գաղափարներդ էնելու մեջ, ու ինչխոր, չիդեմ, ես էս տարվա ընթացքում էնքան բան եմ ինձի համար բացահայտել, որ

երևի հեչ մի փորձառություն էդքան շատ լավ ինձի բան չէր տա բացահայտելու համար: Ըդիկ լիքը էղել է լաց էղնելով, լիքը տանջանքներով, լիքը դժվարություններով, լիքը даже ուրախ բաներով, բայց լիքը-լիքը background ունիս, լիքը բաներ կսովրիս:

Էլեն. Կուզե՞ս՝ մի փոքր պատմես էդ դժվարություններից՝ ակտիվիզմի դժվարություններից:

Էմիլյա. Նու, ամենաառաջինը, հասարակությունն է: Մանավանդ երբ որ դու կապրիս մի հատիկմ փոքրիկ քաղաքի մեջ, ուրտեղ որ ամեն մեկմ մյուսին կճանչե ու, չիդեմ, ունես ընպես տեսք, որը որ լիքը մարդկանց համար ընդունված չէ, չիդեմ, ջահել աղջիկ ես, էս ուր կերթաս, ինչ կենես էդ թեմայից ինչ-որ բաներ: Առաջինը ըդիկ է, որ դժվար է, որովհետև ինչքան էլ մենք ըսենք, որ հասարակությունը օյ օյ, մենք գիտենք, որ ճիշտ բաներ կենենք, բայց իրանք էնքան կազդեն մեր վրա: Էսպես դու մեկ-մեկ քեզ կզգաս просто изгонный, чужой среди своих, свой среди чужих: Ու ըդիկ կրնա էնքան միամիդ էնպես атака տա, որ ըսես ինչի, մե րոպեմ, ամեն ինչ լավ էր: Բայց կրնա ինչ-որ մեկը քեզի դուրս սպեսնա թարս նայե, կամ ինչ-որ ձյաձյա քեզի բան ըսե, ըդորից էնքա՛ն վատ քեզի զգաս, даже կմտածիս ինչի բայց, ըդորից ավելի վատ բաներ էլ է էղել: Էդի էդ պահն է: Երկրորդը էդ ներքին ակտիվիստական թեմաներն են ու շատ հաճախ կեղնին հենց ակտիվիստների մեջ, որովհետև մեկ-մեկ даже իրանք կշփոթվին էդ ամեն ինչի մեջ ինչ որ կան, ու խառը-խուռը իրավիճակներ կեղնի:

Էլեն. Ի՞նչ նկատի ունես էդ խառը-խուռը իրավիճակները:

Էմիլյա. Ինչ-որ, գիտես, մեկ-մեկ մոտս զգացողություն է, որ կեսից կմոլորվինք, ինչխոր ուր կերթանք, ինչի համար կերթանք, ինչի կերթանք: Даже կեսից մեր վրա է, մյուսների վրա է կազդե ըդիկ: Հետո լիքը-լիքը այլ ներքին հարցեր կան: Դե, Հայաստանն էլ է փոքր, ամեն դեպքում:

Էլեն. Իսկ, օրինակ, դու ունե՞ս տենց կոնկրետ պատկերացում, թե ուր պետք ա գնանք, ինչ պետք ա անենք:

Էմիլյա. Չէ՛, հենց խնդիրը էդ է: Ես պատկերացումներ вообще... Մեկ-մեկ ընբես կարան մեր գաղափարները իրար հետ բան էղնի՝ ընբես իրար տա, որ բում էղնի մի հադմ: Հետո, բանը, իմ համար, օրինակ, շատ դժվար է ներքնայնացված ինչ-որ թեմաներ հաղթահարել, ու էդիկ որям շատ դժվար է, շատ դժվար է ըսպես, չիդեմ, ինձի կթվա ես մինչև հիմի պրոցեսի մեջ եմ, ինչքան էլ մենք ըսենք օքեյ, օքեյ, բայց ներքնայնացված էնքան բաներ կան, որ ամենանգամ ջրի երես կհելնի, ըդիկ կարա լիքը խառնե քեզի, էլի:

Էլեն. Ի՞նչ թեմաներ, ավելի քվիր համայնքի հետ կապվա՞ծ:

Էմիլյա. Հա, կոնկրետ համայնքի հետ կապված, չիդեմ, հարաբերություններ հետ կապված, օրինակ, առողջ հարաբերություններ, եսիմ, լիքը էդպես հարցեր կան էլի: Ներքնայնացված քեզ համար լիքը հարցեր կան, դու ինչ-որ գիտակցաբար կհասկանաս, որ ըդիկ օքեյ չէ վաբշե, ինչի ես պահել ուղեղիդ մեջ, բայց շատ դժվար է էլի:

****

Էլեն. Էդ դժվարությունն երից ո՞նց ես դուրս գալիս կամ օրինակ էդ սթրեսային իրավիճակը որ ասում էիր, որ անվտանգության հետ կապված խնդիր ունեցաք, դա էլ արդյոք ստիպել ա քեզ մտածել էս ամեն ինչը թողնել: Կամ ո՞նց ա վերաբերմունքդ փոխել ակտիվիզմին կամ կին/քվիր իրավապաշտպան լինելուն:

Էմիլյա. Հա, լիքը ունեցել եմ մտքեր, ինչ թաքցնեմ մեղքս: Որովհետև մեկ-մեկ շատ կվախենաս կամ ինչքան էլ խոսաս, որ օքեյ, ես հաղթահարել եմ, բայց մեկ-մեկ էնքան վախենալու բաներ կթվա: Շատ հաճախ даже քեզի համար չես վախենա, այլ կողքինն երիդ, որովհետև կրնաս փոխվիս, իրենց վնասես даже կամ կողքինն երդ միամիտ վնասվին, ինչխոր էդ պահին, երբ որ կմտածեի թողնել էրթալու, կմտածեի, որ ես լիքը փոխվել էի, ես լիքը ներքին ագրեսիա ունեի, պասիվ-ագրեսիվ էի դառել, просто չէի ուզի ոչ մեկին վնասեի, որովհետև կզգայի էլի, որ կրնա ինչ-որ բան վրես ազդեր ահավոր, բան:

Էլեն. Էդ ագրեսիան կամ էդ ազդելը burnout-ից էր գալի՞ս, թե՞ նաև ուրիշ բանից էր:

Էմիլյա. Նայի, հիմնականում burnout-ից, բայց ընբես է, որ ես կհիշեմ ինչ-որ период ընտանեկան հարցեր կար: Իմ մոտ սաղ իրար վրա կուգա միանգամից: Ընձի շատ կօգնե թազա մարդկանց հետ շփվելը: Ես կհիշեմ, որ Թբիլիսի էինք գնացել, տարբեր երկրներից ակտիվիստների հետ կխոսայինք, իրանց փորձից կպատմեին, էնքան հետաքրքիր էր, ըսպես թազա էներգիա էր տվել: Ես կհիշեմ, որ Թիֆլիսից հետո ես ու [նշում է կոլեգային], որ եկել էինք, ըսպես լիքը

իվենթներ կդնեին ք, լիքը էրեխեքին կպատմեին ք, ընպես լավ էր ազդել էդ: Ինչ-որ միշտ կուզես իրանց հետ շփվիս, իրանց փորձառությունից իմանաս, ըսպես զգաս, որ աշխարհի ինչ-որ ծեր քեզի պես էլի մարդիկ կան, դե շատ կօգնի իրանց հետ շփվելը: Շատ կայֆ է էդ զգացումը: Հետո թազա բաներ սորվելը, էդ էլ շատ կօգնե: Օրինակ՝ ես ու [նշում է կոլեգային] լիքը թազա բաներ կսորվինք, էրեխեքին պատմենք: Էդ էլ է շատ կայֆ, էլի, ինչ-որ մեկին սորվցնելու համար բաներ սորվելը:

Սոնա Գրիգորյան

Պատմությունը հավաքագրելու պահին Սոնա Գրիգորյանն աշխատում էր «Փինք» ՀԿ-ում որպես ծրագրերի համակարգող: Պատմությունը հավաքագրվել և սղագրվել է Տաթև Բալդրյանի կողմից: Սոնան պատմում է ակտիվիստական ոլորտում իր առաջին քայլերի մասին և մտորումներ անում իր ակտվիզմի, հոմոֆոբիկ ճնշումների և մասնագիտական այրման վերաբերյալ:

Տաթև. Իսկ էս տարբեր SMM կամպանիաներում գովազդով զբաղվելուց ո՞նց էկար էս ակտիվիզմի ու հասարակական կազմակերպությունում աշխատելու:

Սոնա. 14 թվին որտև Փինքի հետ ծանոթացա, ոնց որ Փինքի աշխատողներից մեկի հետ ծանոթացա ու որ էկա ստեղ, ինչ-որ մի տեսակ ինչ-որ տեղ քթա էլի: Community-ին քթա, մարդկանց, ում հետ կարաս ինչ-որ ընկերական հարաբերություններ ստեղծել, ու նաև սկսեցի էդ բաներին գնալ ինչ-որ թրեյնինգ կամ բան՝ camp-եր, որ անում էին, մասնակցում էի, ու միշտ մեջս բան կա, որ ծիպը ես իսկական ակտիվիստ չեմ, բան, չգիտեմ, ծիպը ես փաբլիք չեմ

շատ, հա, ինչ-որ, եսիմ ինչեր չեմ անում, բայց հետո պռոստը սենց մտածում էի՝ բա ինչի եմ էլի, օրինակ, էս իմ կյանքի ընկերներին, օրինակ, փորձում օգնել կամ, օրինակ, գործ քթնել իրանց համար, երբ որ գիտեմ՝ պետքա, երբ որ գիտեմ՝ իրանք մենակ են, ու ուրիշ ոչ մեկ չկա օգնող, կամ ինչի եմ ես ոնց որ, չգիտեմ, ինչ էի ասում, ոփշմ էդ activity-ները, որոնք սենց դասական ակտիվիզմի մեջ չեն մտնում, որոնք դուրանում ես, անսենք, էդ մարդկանց համար, որովհետև գիտես՝ իրանք պրինցիպի ուրիշ հնարավորություն չունեն ու քո կարիքը ունեն, պլյուս՝ համայնքից են, ասենք: Ոնց որ էղել ա ուղղակի, որ, չգիտեմ, զուտ emotional support տալը ահագին օգնելա էդ մարդկանց, ու պետքա զուտ լսել իրանց հետ պահին, ու ես էդ երբեք չեմ բանարել՝ էդ, skip արել, որովհետև գիտեմ՝ ինչքան կարևոր ա, որ մի տեղ լինես, որ քեզ լսեն գոնե մի քիչ:

Տաթև. Իսկ էս, որ նոր ասում էիր՝ դասական ակտիվիզմի մեջ չի մտնում, ո՞րն ա քո համար էդ ակտիվիզմը:

Սոնա. Էդ դասկա՞նը:

Տաթև. Հա:

Սոնա. Ը, դասականը՝ երևի էրևալ նկարներում ինչ-որ, չգիտեմ, public ընելել, հա, օրինակ, ինչ-որ speech-եր, event-ներ, բյուրոկրատական լեզուերբեմն, որը մեկ-մեկ ան հասկանալի կարա ընի: (դադար) էլի ոնց որ անարդարության մասին բարձրաձայնում ու ոնց որ public ավելի figure ընելել էլի, իմ, ոնց որ ես էդքան էլ չեմ... ոնց էդքան էլ public չեմ բանանում, որովհետև էդքան էլ էս ընթացքում, ինչքնա որ էս 27 տարվա ընթացքում ինչ ապրել եմ, ոնց որ զգում եմ, որ էներգիաս անընդհատ տվել եմ մարդկանց ինչ-որ, ու հիմա մի տեսակ զգում եմ, որ վսյո տակի ավելի շատ կուզեի մեջս մնար էդ էներգիան ու իմ վրա ծախսեի, ու էդ ինձ բանարեց նրան, որ ես վսյո տակի իմ շփումը մի քիչ կարողանամ

սահմանափակել, նու ոչ թե սահմանափակել, այլ ոնց որ դոզաներով անեմ, որովհետև քամվում եմ էլի ահավոր ու դրա համար հասկացա, որ չեմ կարա ես էդ public ակտիվիստական էդ ինչ-որ բանից ընեմ, բայց ուրիշ ձևով կարամ էդ անեմ, որը իմ համար էլ բան կլինի:

Տաթև. Հա, հենց ինչն էր որ... ի՞նչ պահ էր, որ որոշեցիր արդեն սկսես աշխատել, արդեն ոչ թե մենակ համայնքի մաս լինես, այլն նաև համայնքի համար ինչ-որ աշխատես:

Սոնա. Հը, դե էղելա, որ էլի կամավոր ինչ-որ արել եմ բաներ, բայց էս մեկը, ես Փինքում վաղուց էի ուզում աշխատեի, ուղղակի ոնց որ լինում էր, ստացվում էր, որ Ռուստաստան էի գնում, որովհետև տնեցիքս ինձ միշտ բան էին անում՝ տանում էին իտոգում ընդե (դադար), ու ես մենակ հետ էի գալիս Հայաստան՝ առանց ասելու, որ տոմս եմ առել, բան, տենց առնում էի տոմսը, նոր էի ասում: Ու որ հետ էկա, իմացա որ կա position, ու միանգամից դիմեցի, որովհետև էդ պահին մի հատ ուրիշ ինչ-որ էլի տենց side project կար, բայց էդ ոնց որ բան արեցի էլի, ու միշտ ուզում էի աշխատեի ստեղ, որովհետև բոլոր մնացած գործի տեղերը ոնց որ ինձ fully չեմ կարողացել, ոնց որ բաց... նու ազատ զգամ ոնց որ, ազատ ու նաև չվախենամ, որ ինձ բան կանեն... out կանեն ինչ-որ կամ ասեն՝ հարցեր կտան իմ անձնական կյանքից, որը ես տենց շատ միշտ բան եմ պահել՝ private եմ պահել, ու ուրիշ գործի տեղերում ասում էի, չէի ասում վապշե կամ ասում էի, որ բի եմ, եթե խոսքի շատ մոտիկ մարդկանց:

Տաթև. Բայց տենց խոսկացություններ լինու՞մ էր, ուղիղ հարցնու՞մ էի, թե՞ զգում էիր, որ կա տենց ինչ-որ...

Սոնա.. Զգում էի, որ ինչ-որ բան խոսակցություններ իրար մեջ սենց բաներ, ու մի տեղ էլ կար, որդե մի հատ տղամարդ մենեջեր էր, որը

սենց ամեն օր կարար ուղղակի գեյերի թեման բացեր, հենց տղերքի գեյերի մասով:

Տաթև. Քո՞ հետ թե...

Սոնա. Չէ, ընդհանուր, ու սենց չէի հասկանում՝ որն ա էս մարդու խնդիրը, ինչ ա ան ընդհատ դրանից խոսում (ծիծաղում է), տենաս՝ խի:

Տաթև. Տենաս՝ խի (ծիծաղում է):

Սոնա. Դրա համար էդ ոնց որ միտքը, որ ես կլինեմ մի տեղ, որտեղ ոնց որ չեմ... էլ չի լինելու էդ իմ մտավախությունը էլի ,այ էդ ինձ թվումա՝ բան արեց շատ, որ ուզում... դրա համար էի շատը ուզում նաև, ու պլյուս էն որ կարամ համ համայնքին տեսնեմ օֆիսում պռոստը աշխատելուց, նաև էդ էրեխեքին կարամ տեսնեմ, որ կամ ճանաչում եմ, կամ չեմ ճանաչում, կապ չունի՝ կկարողնամ, ասենք, թեկուզ բալկոնում ծխելուց ինչ-որ բան խոսամ հետները ու ինչ-որ նոր բան իմանամ, կամ ես նոր բան իրանց ասեմ, կամ, չգիտեմ, օգնեմ ինչ-որ բանով, հետաքրքիրա, որովհետև համայնքի էրեխեքը շատ յուրօրինակ են լինում, ամեն մեկը մի, չգիտեմ, մի հետաքրքիր մարդա: ըհը

Տաթև. Իսկ քո Փինքում ու առհասարակ ակտիվիստական աշխատանքի առանձնահատկությունները որո՞նք են:

Սոնա. Հիմա՞ հենց:

Տաթև. Առահասարակ, որ արել ես, նախկինում որ արել ես, հիմա առանձնահատկությունները:

Սոնա. Աշխատանքի, օրինակ, բանը՝ ինտերվյուներ տալ հենց Փինքի մասին էլի, ինչ-որ կազմակերպություններում կամ եթե ուրիշ event-ների ենք գնում ներկայացուցչություն (դադար) սկզբից, որ

Նոր էի ընդունվել, ոնց որ ավելի շատ համայնքի հետ էի կապված, համայնքային event-ների՝ ոնց որ ֆոտո նյութեր գրել դրա մասին, ոնց որ ավելի ազատ բան էր էլի, այսինքն՝ կարայի գրեի, ու ստեղծագործական բան էր ավելի շատ, հետո արդեն ոնց որ project coordinator դարձա, ու մի քիչ փոխվեց էդ բանը, ու էս պահին ոնց որ էլի, երբ հնարավորա ընում, փորձում եմ էդ communication-ի ու համայնքային բաներով, հա, մի քիչ էլ ներգարվվեմ, բայց հիմնականում չի լինում էդ ժամանակը, ու ցավում եմ դրա համար իրականում ահագին, բայց դրանից զատ, ասենք, բոլոր միջոցառումները ինչ-որ արել են, մինչև վերջ պետք ա, օրինակ, մնաս: Մի անգամ մինչև ժամը 4-ը Պոլիգրաֆում բան ենք արել. rainbow forum-ի փակումն էր, մինչև 4-ը մնացել ենք ընդե, բայց արդեն 2-ից մեռած էինք էլի սաղս: Կամ ֆոռումներին, օրինակ, եթե բան ես, բան էի վարում, օրինակ, տեսանելիության մասին քննարկում էի վարում տենց մի 10 հոգանոց խմբի հետ ու հետո պետք ա ներկայացնեի, ու պլյուս թարգմանություն էր բան, որովհետև ոնց որ մարդիկ կային, որ հայերեն չգիտեին: Նաև ինչ-որ digital բաներ եմ սարքել ոնց որ՝ կամ պոստեռներ, կամ բուկլետներ ինչ-որ: Շատ տարբեր բաներ, չգիտեմ, ոնց որ ինչ հասցնում ես, անում ես էլի, ստեղ տենց ա էլի:

Տաթև. Ինչ-որ բան կա՞, որ հիմա չես անում, բայց որ կուզես անես աշխատանքի ու առհասարակ ինչ-որ հարցերում, օրինակ, որ նոր ասում էիր, որ հնարավորություն չունես էլ գրելու, կուզեի՞ր՝ ունենայիր ժամանակ, դրանով զբաղվեիր:

Սոնա. Կուզեի երևի, ինչ-որ գուցե վերլուծական կարող ա ինչ-որ բաներ կարողանայի կենտրոնանայի ու գրեի, էն ինչ-որ իմ վերլուծությունները, որովհետև շատ ժամանակ, ասենք, ինչ-որ կոնտեքստը ընդհանուր իմանալուց ու նաև վապշե էս պոստ-Սովետ երկրների կոնտեքստը իմանալուց շատ ոնց որ հետաքրքիր նմանություններ կարաս տեսնես ու մի քիչ վերլուծես և այլն, ու

ոնց որ իմ մեջ ուղղակի էդ ոնց որ կա, ինչ-որ գրելու կոմպլեքս, ոնց որ իմ համար պետքա perfect լինի էդ գրածը, ու շատ ժամանակ ռիսկ չեմ անում ուղղակի դնեմ, սկսեմ գրել մտքերս, հա, երևի էդ, կամ ինչ-որ համայնքի էդ ինչ-որ խնդիրներ կամ event-ներ գուցե անել:

Տաթև. Իսկ առաջարկու՞մ ես:

Սոնա. Հա, երբ, բան լինում, իդեաներ եմ ինչ-որ տալիս, ու հետո իրականացնելա ուղղակի բարդ էդ իդեաների, բայց հլը որ տենց չի էղել, որ, ասենք, ինչ-որ նենց բան լինի, որ հենց ծիպը ես կորդինացնեմ ինչ-որ կամ բան:

Տաթև. Իսկ ինչո՞վ ա բարդ, որ ասում ես բարդ կլինի իրականացնելը:

Սոնա. Էն նրանով, որ կարող ա մենակ մնաս էդ ամեն ինչում, այսինքն՝ կարողա ոնց որ չկարողանաս մարդ քթնել, ու շատ ժամանակ դժվարա հենց մարդ քթնելու պռոցեսնա էլի միշտ լինում, որ դժվարանում ես, որովհետև չեն ուզում մարդիկ ինչ-որ էրևան, կամ ինչ-որ մի մասսա կա, որ գալիս ա, բայց էդ հիմա ավելի են քչացել: Շատ ժամանակ բյուրոկրատիա կա ամեն ինչում, ու պետք ա ամեն մի հատ ինչ-որ ուղղակի էն իդեան, որ դու ունես, որը կարա շատ թույն ինչ-որ պռոստը, օրինակ, բան՝ ցուցադրություն, հա, պետք ա դրա համար էնքան բան հավաքես, էնքան չեկ ու եսիմ ինչ հավաքես, որ ոնց որ թղթաբանությունը...

Տաթև. Հոգնացնում ա:

Սոնա. Դե շատ boring էդ ամեն ինչը, հա:

Տաթև. Իսկ տենց դեպք էղե՞լ ա, որ տենց ընթացքը արդեն հոգնացրել ա, թե՞..

Սոնա. Չէ, հլը որ ինչ անում եմ, փորձում եմ մինչև վերջ անեմ...

Տաթև. Չէ, որ հասկացել ես պետքա ան ես, հետո հասկացել ես՝ մեծ ին չ-որ բան ա:

Սոն ա. Չէ, չէ, հը: Հաստատ ին չ-որ պահերի կարողացել եմ գտն ել ին չ-որ մարդկան ց ,կամ ես եմ պռոստը ոն ց որ օգն ել, եթե ուրիշն երն են լավ իդեան եր ուն եցել, ու ուրիշ մարդ չի էղել, որ կարա բան ան ի, շատ դեպքերում հաստատ: Ուղղակի իմ մոտ ոն ց որ նաև տպավորությունը էն էր, որ ես իմ գիտելիքը ու ես հերիք չեմ, պետք ա ոն ց որ ավելի մասն ագիտան աս, ավելի երկար ստեղ աշխատես, որ ավելի լավ իման աս, բայց նու ոն ց որ ին ձն ից լավ ո՞վ կարա իման ա համայն քի խն դիրն երի մասին, եթե ես եմ էդ համայն քից էլի ու նաև Հայաստան ում եմ ապրում:

Տաթև. Բայց էդ զգացումը ուն են ու՞մ ես:

Սոն ա. Ո՞րը:

Տաթև. Որ պետքա ուրիշ շատ իմացող ինչ-որ մեկը լինի, որ կարանա դա անի:

Սոնա. Մեկ-մեկ՝ հա, մեկ-մեկ լինում ա, որ տենց ավելի իրավաբանական ինչ-որ բաների հետ ա կապված:

Տաթև. (ցածրաձայն և մի փոքր ծիծաղելով) բոլորս:

Սոնա. Հա՞ (ծիծաղում է):

Տաթև. Իսկ, օրինակ, էստեղ աշխատելը՝ Փինքում աշխատելը ընկերների, ընտանիքի անդամների վերաբերմունքը դրան ո՞նց ա:

Սոնա. Ընտանիքս չգիտի, քուրս գիտի, բայց մամաս ու պապաս չգիտեն, ու իրանց դաժե մենակ էս վերջերս եմ caming out արել՝ երևի տենց մի երկու շաբաթ առաջ:

Տաթև. Caming out ինչի՞ հետ կապված:

Սոնա. Ըհմ, որ ես լեսբի եմ, հլը որ վատ ա էդ ընթանում:

Տաթև. Իրա՞ հետ եք ապրում:

Սոնա. Չէ (դադար), Փինքի էդ աշխատելը շատ թույն ընկեր ա տենց ինձ տվել ու նաև փորձ ա տվել ինչ-որ բաներ անելու, որը որ ես ռիսկ չէի անի անեի, հա, կամ, ասենք, շատ կկասկածեի, բան, բայց ինչ-որ պահի ինքն ավստահ եմ, ոնց որ էդ պահին (դադար) ոնց որ արել եմ ու ջոգել եմ, որ ուղղակի պետքա անել, ոչ թե անպայման պետքա perfect լինի էդ արածը, գոնե պետքա սկսել ինչ-որ: Ու նաև էլի լիքը սովորացրել ա մարդկային հարաբերությունների մասին ու առհասարակ հասարակական կազմակերպությունների գործունեության մասին ու երևի, որ (երկար դադար)... որ ոնց որ (դադար)... ոնց որ հետաքրքիրա աշխատել լիքը էն մարդկանց, լիքը մարդկանց հետ, ում հետ ոնց որ տենց շատ ընդհանուր բաներ կարաս ունենաս էլի, տենց թեմաներ ինչ-որ ու նաև ոնց որ

միանգամից ընդունված լինես, մի տեսակ զգացողությունն ա դուրս գալիս:

****

Սոնա. Օ ուինձ թվումա՝ մեծ... Փինքում աշխատելու մասով երևի գնանք, որ երբ որդուչես աշխատում շատ ժամանակ, ոնց որչգիտես բոլոր դեպքերի մասին, որ տեղի են ունենում, ուերբ որ փորձում ես հաշվել, ոնց որիմանում ես դետալներ, հա, նենցչի, որ ասում են անուն ազգանունով, էդ գաղտնիա ուբավականին լավ պահպանվում ա, ուղղակի ընդհանուր սիտուացիան, հա, երբ որիմանում ես, սենց ուղղակի պահի տակչգիտես՝ երբ կփոխվի էս ամենինչը, ուոնց որանհույս ա թվում մի տեսակ էս սաղ, ումտածում ես՝ ոնց որ (դադար) էդ զեկույցներն էլ, որ նայում ենք, ոնց որպետքա խմբագրվի էդ զեկույցները, ումի պահ ես էլ էի էդանում ուբայց կարդում էլ եմ էլի, երբ որբանա լինում...

Տաթև. Զեկույցնե՞ր, որոնքՓինքնա պատրաստում, թե՞...

Սոնա. Հա...

Տաթև. Հայաստանիմասի՞ն են:

Սոնա. Չէ, որՓինքնա անում, հետոՀԳԲՏ մարդկանցիրավունքերի խախտման զեկույցները, ունաև ընդհանուր դեխոսում ենք էրեխեքով, հա, անունների կարողա ոնց որինձ պետքչի, պետքէլ չիիմանալ էլի էդ մարդկանցանունները, ինձ պետքաիմանալինչ դեպքա էղել, ուոնց որմենքինչ կարանքանենքընտեղ, ուոնց որշատ դեպքերում ասենքպռոստը չգիտես՝ ինչանես:

Տաթև. Իսկերբ որէս պատմությունները լսում ես կամիրավիճակները առհասարակ լինումեն, ի՞նչ մեծանիզմներունես աջակցման ինքդքեզ՝ էդիրավիճակները հաղթահարելու կամավելի լավ տանելու համար:

Սոնա. Ըհը, հա, էս պահին էդ մեխանիզմներից, երևի, որ փորձում եմ ինչ-որ ժամանակ հանգիստ ըլնել, հա, չգիտեմ, նորություններ վապշե չեմ կարդում, փորձում եմ մենակ ինչ-որ comfort շուներ նայել ու ոնց որ ինչ-որ trigger-ային բան չնայել, ու ոնց որ տանը կատուն եմ ու իմ partner-ի հետ եմ ապրում ու էս պահին ահագին երջանիկ եմ՝ համեմատած իմ 27 տարվա կյանքին, ու ոնց որ, էդ որ ոնց որ չես կարդում նորությունները, բան, իհարկե, չի նշանակում, որ ոչ մի բան տեղի չի ունենում, ուղղակի էնքան շատ ա էդ բանը, որովհետև դու նաև թիրախավորված ես էն առումով, որ եթե իմանան՝ դու Փինքում ես աշխատում, էդ էլ ա էլի ահագին, եթե մարդիկ կան, որոնք կուզենան ինչ-որ բան անեն, կսկսեն հաստատ Փինքից կամ, չգիտեմ, ու էդ ա նաև բան անում մի քիչ, ինձ թվում ա, նու կամ էլ ինչ-որ ռուսական օրենք էլի գա ըստեղ հաստատվի, ոնց որ էլի hello (ծիծաղում է)

Տաթև. Պետքա նոր մեխանիզմնե՞ր մտածես դրանց համար:

Սոնա. Հա, հաստատ:

****

Տաթև. Իսկ որ խոսում էինք, էս դասական ակտիվիզմի օրինակներ էիր բերում քո համար, այ դու ինչ-որ բողոքի ակցիաների մասնակցե՞լ ես կամ ինչ-որ ձևով ներգրավված ես էղել ինչ-որ ակցիաներում:

Սոնա. Բան, պլակատներ եմ սարքել բանի ժամանակ կարծեմ... Երևանում էր... ա, ես հիշում եմ՝ մենք պլակատ էինք սարքել՝ Փառանձեմն ու թագուհին սեքս էին անում (ծիծաղում է) ամբողջ գիշեր, էդ էինք կտրտել կախել, գրաֆիտի արել, հետո բանի ժամանակ ես ու մի քանի հոգի ոնց որ 2016 թվին դիմել էինք գրանտի, որ բաներ ունենանք՝ տարածք ունենանք միայն քվիր կանանց համար, կանանց կամ non-binary մարդկանց համար, ու տենց մի քանի ամիս էդ տեղը աշխատում էր, շատ հավես սենց բան էր, ինչ էր...

Նախաձեռնություն: Բայց քանի որ կամավորական հիմունքերով էր, ես պետքա աշխատեի էդ վախտ էլի ու ստիպված գնացի գործի ուրիշ տեղ, բայց event-ներն ու բաներ էինք անում: Իսկ բողոքի ակցիաները հենց տենց ակցիաների չեմ էղել, որովհետև վախ ահագին ունեմ, երբ որ շատ մարդա լինում միանգամից, ինչ-որ ինձ պանիկայի մեջ եմ զգում շատ ուժեղ, չգիտեմ, նաև ֆեստիվալներին ա լինում էդ անկապ լրիվ, կամ ինչ-որ համերգների ժամանակ էդ կա էլի ինչ-որ զգացողությունը էդ.. ֆույո...

Նարե Հովհաննիսյան

Նարե Հովհաննիսյանը «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ նախագահն է: Պատմությունը հավաքագրվել և սղագրվել է Շուշան Աբրահամյանի կողմից: Ժողովածուում տեղ է գտել պատմության այն մասը, որտեղ Նարեն պատմում է քրեակատարողական հիմնարկներ առաջին անգամ այցելելու և ԼԳԲՏ անձանց իրավիճակի վերաբերյալ մշտադիտարկում անելու մասին:

Նարե. Հետո, բանը, ոնց որ տեսա՝ ոնց որ էդ ուղղությամբ արվող աշխատանքները քիչ են՝ հենց կոնկրետ էդ քրեակատարողական հիմնարկների, ազատազրկված անձանց, ու որոշեցի, որ բան անեմ *(կարճ դադար)*, տենց մի հատ կազմակերպություն լինի, որը որ էդ թեմաների շուրջ կաշխատի, ու ոնց որ 17 թվականից հիմնադրեցի, 19-ից ոնց որ ծրագրերը ավելի շատացան, ու ոնց որ սկսեցի էդ ուղղությամբ աշխատել:

Շուշան. Ըհմ, ըհմ, հասկացա: Իսկ ասեցիք, որ փակ ոլորտա, որտեղ մուտքունեք, ու դա ոնց որ հնարավորություն ա նաև բարձրաձայնելու էդ ձայները, էդ ո՞նց եք հասել դրան, որ էդ մուտքը լինի, էդ էլ ա էլի հետաքրքիր:

Նարե. Դե, էդ դիտորդների խմբին անդամակցելով՝ որպես փորձագետ սկզբում, այսինքն՝ ընդեղ գնում էինք երկու անդամի ուղեկցությամբ, նու ես էլ, կարգավիճակով դիտորդ ա, բայց հենց մանդատների տարբերություն կա, այսինքն՝ իմը փորձագետ էր, փորձագետը երկու անդամի ուղեկցությամբ կարար մտներ քրեակատարողական հիմնարկ, ու հետո, բանը, ոնց որ դա մի փոքր սահմանափակում էր. ոնց որ պահեր էր լինում, որ դու ուզում ես էդ ահազանգով գնաս հիմնարկ, բայց պետք ա քեզ հետ, այսինքն՝ լինի երկու դիտորդ, ու ոնց որ մի փոքր էդ պահին դիմադրություն կար,

որովհետև ոնց որ կազմակերպությունը նոր էր հիմնադրվել, տենց ծրագրեր չկային և այլն, զուտ ուղղակի ինձ իմանալով ընտրել են որպես անդամ թեև մի փոքր էդ դիմադրությունը կար, այսինքն՝ ինչ-որ շատ փորձառու կազմակերպություն չէր և այլն, բայց ոնց որ ընտրվեցի որպես անդամ, ու ոնց որ արդեն կարողանում էի էդ այցելությունները անել, ակտիվ... Ու, ասենք, տարվա կտրվածքով հնարավոր ա մոտ 40 այցելություն անեի էն ժամանակ, ինչը բավական ինչ շատ թիվ ա...

Շուշան. Դա միայն ա՞կ այսինքն...

Նարե. Չէ...

Շուշան. Էլի դիտորդների՞ հետ:

Նարե. Չէ, երկու անդամի՝ դիտորդի ուղեկցությամբ, հա: Ու ոնց որ էդ ձևով հայտնվեցի էս ոլորտում:

Շուշան. Հա՛: Իսկ էդ փակ համայնքները, փակ տարածքները, որ մտնում էիք, օրինակ, էդտեղ Ձեր հանդեպ վերաբերմունքը ո՞նց էր, Ձեզ ո՞նց էին էն տեղ ընդունում: Օրինակ, ասեցիք՝ ղեկավարության կողմից էդ դիմադրությունը ոնց որ մի քիչ կար:

Նարե. Չէ, ոչ թե ղեկավարության կողմից, այլ երբ որպեսզի ինձ արդեն ընտրեին որպես անդամ, ոչ թե փորձագետ:

Շուշան. Հա, հա:

Նարե. Դիտորդների խմբի ներսում, ճիշտ ա՝ ընտրել են, բայց մի փոքր էդ կամուկաց վիճակը կար՝ ճի՞շտ են արել, որ ընտրել են, թե չէ, իսկ հիմնարկների հետ կապված էդ դիմադրությունը, դե, պարզ ա՝ դու բան ես անում, ոնց որ մտնում ես քրեակատարողական հիմնարկ, էդ... Ոչ թե դիմադրություն, այլ դու էն տեսնող աչքն ես, որ մտնում ես, ու դա իրանց զգաստացնում ա, զգոնացնում ա... Իմ նկատմամբ... Ըը, ո՞նց ասեմ... Ըը, երբ որ տեսնում են, օրինակ,

աղջիկ ա՝ աղջիկներ են մտնողները, սենց իրանք մի փոքր ավելի բան են անում՝ ինչ-որ սենց զգաստանում են, փորձում են, թեկուզ ազատազրկված անձինք էլ, տեսքը մի փոքր կոկիկ լինի, իրանք սենց մաքուր, բան, բառապաշարով խոսեն, ինչ-որ սենց, կարող ա դաժե ինչ-որ օծանելիք ցանած գան էդ, բան... Իրանց սենց մաքսիմում փորձում են էդ պայմաններին համեմատ նայեն: Ես, օրինակ, միշտ մտածում եմ, որ եթե տղա լինեի ու էս ոլորտում աշխատեի, էդ նույն ձևով չէր լինի, ինչ որ հիմա, որովհետև հիմա էս սեռը հօգուտ ինձ ա, կոպիտ ասած, աշխատում:

Շուշան. Եթե տղամարդ լինեիք, ո՞նց կլիներ:

Նարե. Դե, սովորական կլիներ ավելի, այսինքն՝ իրանց ընկերն ա, բան, ասենք, էդ բանը... Բայց ասենք աղջկա դեպքում՝ կնոջ դեպքում, ոնց որ... Ո՞նց ասեմ, իրանց դա ավելի ա զգաստացնում, ավելի ա զգոնացնում: Ու ոնց որ նույն, ասենք, հիմնարկի պետի համար էլ կամ ասենք աշխատողների համար էլ, ոնց որ իրանց... Ոնց որ համ էկզոտիկ ա էդ միջավայրում սենց ոնց որ աղջիկ կամ ինչ-որ կին: Ու ոնց որ, եթե դու դա կարողանում ես հօգուտ քեզ օգտագործես, դա ավելի ա բան դառնում... ասենք, չգիտեմ, էն որ նույնիսկ արտաքինով *(թեթև ծիծաղում է)* ինքը ճիշտ ա՝ կարող ա մի քիչ սխալ բան ա հնչում *(թեթև ծիծաղում է)* բայց ասենք, էն որ, չգիտեմ, արտաքինով դու մտնես ու նույնիսկ ասենք լինես ցանկալի, չէ՞, ասենք, չգիտեմ, դա իրանց կողմից ինչ-որ վերաբերմունք ա ստեղծում, որպեսզի, ասենք, քեզ հետ լինեն հարգալի՛ց, այսինքն՝ մաքսիմում բան լինեն, ոնց որ...

Շուշան. Իսկ էդ Ձեզ չի՞ լարում:

Նարե. *(շարունակելով)* տրամադրված լինեն... Ինձ դա չի լարում, որովհետև, ասենք, երբեք ինչ-որ էդ չափի բանը չի անցնում, այսինքն՝ նենց չի, որ ես սենց կոկետանում եմ, ինչ-որ սենց թույլ եմ տալիս, որ ինչ-որ սենց ֆլիրտի վերածվի, այսինքն՝ իմ կողմից էդ

բան ը միշտ կա: Բայց ,ասեն ք, իրան ց կողմից ոն ց որ դու, ասեն ք, հետաքրքիր կերպար ես, ընդուն ելի կերպար ես, ու դա ոն ց որ ավելի ա, սեն ց ին չ-որ հետաքրքիր երան գն եր ա տալիս էդ ընդհան ուր աշխատան քին *(ծիծաղում է)*:

Շուշան. Հասկացա: Վերաբերմուն քը իրան ց բան ա էլի...

Նարե. Ավելի դրական ա: Ասեն ք, օրին ակ, եթե դու կարողան ում ես հասն ես Նրան, որ իրան ք քեզ թե՛ որպես մասն ագետ, թե՛ որպես կին, աղջիկ, չգիտեմ, իգական սեռի ներկայացուցիչ, իրան ք քեզ ոն ց որ ընդուն են ու հարգեն, ու միևն ույն ժաման ակ դու սեն ց թեթևի մեջ լին ես, նաև ցան կալի, ոն ց որ էդ լիքը պլյուսն եր ա բերում գործի առումով (*ծիծաղում է)*, պետք ա դրական ը քաղել...

Շուշան. Հա՛ ...

Նարե. Էդ առումով իմ նկատմամբ ին չ-որ չէի ասի, որ դիմադրություն զգացել եմ, բայց, օրին ակ, ո՞նց ասեմ, փակ... Հատկապես... Նայի՛. եթե դու դրսում խոսում ես ԼԳԲՏ մարդկան ց մասին, դա ուրիշ ա, որովհետև, հա՛, դրսում էդ մարդը ազատության մեջ ա, բայց Ներսում, ասեն ք, ազատազրկված ԼԳԲՏ մարդկան ց մասին խոսելը լրիվ ուրիշ ա, որովհետև նախ իրան ց միջավայրն ա ուրիշ, իրան ց Նկատմամբ վերաբերմուն քն ա ուրիշ, իրան ք ընդեղ ին չ-որ հատուկ պիտակավորված, խարան ված, ցածր մակարդակի և այլն, և այլն... Օրին ակ՝ էդ առումով, էն սկզբն ական շրջան ում, երբ որ, ասեն ք, չգիտեմ, հետո ես էդ ժաման ակ բան արեցի... Մի հատ ծրագիր էի շահել, հոդված պետք ա գրեի նույն ասեռական ազատազրկված ԼԳԲՏ ան ձան ց մասին, մի քան ի հիմն արկն եր մտել էի ու ոն ց որ էդ բան երի... էդ խցեր էի մտն ում, էդ մարդկան ց հետ էի խոսում, ին չ-որ սեն ց բան եր հասան ական ջիս, սեն ց որ մտն ում էի, ին չ-որ բան եր ասում էին՝ բա դուք շուտ-շուտ եք գն ում իրան ց խուց, հա, բա դուք իրան ց համար եք եկել, ոն ց որ իրան ք սեն ց փորձում էին ին չ-որ, ո՞ն ց ասեմ, էդ բան ը պրոյեկտեին նաև աշխատան քի վրա՝ իմ

աշխատանքի վրա, ու էդ, օրինակ, հետո, ասենք, կազմակերպությունով, երբ որ ինչ-որ ծրագիր բան պետք ա անեինք, մի փոքր... *(ինքն իրեն ուղղելով)* ոչ թե մի փոքր, այլ ասենք, *(շունչ է քաշում, կարճ դադար)* աշխատողները ընդեղ ասում էին՝ հա ,դե իրանք սրանց համար են եկել, դուք իրանց հետ գործ չունեք...

Շուշան. Հա՛ ...

Նարե. Այսինքն՝ էս ոնց որ, դե էն «արվամոլների հետ են իրանք աշխատում», ինչ-որ սենց բաներ էին ասում: Բայց, իհարկե, հետո մարդիկ իրանց մոտ հեռախոսներ ունեն, այսինքն՝ էդ դատապարտյալներն ա, կամ հեռուստացույցով հարազատների միջոցով և այլն, հետո ինչ-որ սենց բաներ նայում են, ասենք, վիդեոներն են նայում, քո արած աշխատանքն են անում *(նկատի ունի՝ նայել)*, տեսնում են, որ չէ՛, դու հատուկ կատեգորիայի մարդկանց համար չես աշխատում, դու կարաս նաև իրանց համար էլ աշխատես, ու էդ բանը մի փոքր կոտրվեց: Էդ... այսինքն, էդ փորձը ոնց որ, կոպիտ ասած, էդ կանալները փակելու չստացվեց, որովհետև ոնց որ իրանք տեսան, որ դու իրանց համար էլ ես աշխատում:

Շուշան. Հա՛ ...

Նարե. Հետո, ասենք, օրինակ, կանանց հետ կապված հարցերը, նայի՛, ասենք դրսում կանանց խնդիրների մասին խոսելը ուրիշ ա, ասենք, ինչ-որ, չգիտեմ, բռնություն ա եղել, կարան սենց հավաքվեն, գնան, ցույց անեն, պլակատ վերցնեն, պոստեռ խփեն, գնան ոստիկանություն, դատախազություն, բան, բայց ներսում դու չես կարա տենց խոսաս, որովհետև դու գործ ունես ազատազրկված կնոջ հետ, ով որ նախևառաջ հանցագործություն ա կատարել. դա լիքը *(կարճ դադար)* բաները, ոնց որ նախադրյալ ա ստեղծում, որ դու քո կոմունիկացիան փոխես՝ թե՛ հասարակության հետ, ոնց որ էն մարդը, ով որ, ընդունենք, մյուս աղջիկներին քաշել ա թրաֆիքինգի

մեջ, դու չես գնա իրա խնդրի մասին նենց խոսես, որ ինքը տենց ան մեղ զոհ էր ու, ասենք, իրան ընդեղ հոշոտում են, չէ՞ ...

Շուշան. Հա, հա...

Նարե. Այսինքն՝ ստեղ խնդիրը նաև հասարակության հետ կոմունիկացիան ճիշտ տանելն ա, այսինքն՝ էդ թեմաների մասին, երբ որ խոսում ես *(փորձում է մտքերը դասավորել)*... Կոմունիկացիան ճիշտ, նենց տանել, որ քեզ լսողը հասկանա՝ դու ինչի մասին ես խոսում, քո մտահոգությունը կիսի: Այսինքն՝ քեզ լսելուց հետո չասի՝ հա, դե լավ, դե էն հանցագործի մասին էլ նենց ա խոսում, ոնց որ եսիմով ա: Այսինքն՝ դու էն որ ըստ էության խնդիրը տեղ հասցնես, ու նույնը նաև կանանց դեպքում, այսինքն՝ *(դադար)* հետո ստեղ, օրինակ, գենդերային բառն ա մի քիչ բան ընկալվում, օրինակ, փակ տեղ ա, ինչ-որ սենց բաներ գիտեն էդ բառերի մասին, օրինակ, էդ... էդ կոնցեպտը մի քիչ իրանց հասկացնելը միանգամից չի լինում:

****

Նարե. Ու էդ առումով մի փոքր դժվար ա կանանց թեմաներով աշխատելը, որովհետև էդ զգայունությունը չկա, այսինքն՝ դե հա, իբր ի՞նչ են անում իրանց որ...

Շուշան. Հասարակությա՞ն կողմից:

Նարե. Չէ, հենց աշխատողների կողմից, ասենք, որ մի քիչ էդ բանը չկա էլի, ասենք, օրինակի համար, կնոջը հաճախ լոգանք տրամադրելը ինչի ա կարևոր, «դե շաբաթը մի անգամ տալիս ենք. էդ ա ձևը»...

Շուշան. Հա՛ ...

Նարե. Կամ, ասենք, չգիտեմ, զբոսանքի պայմանները, տեսակցության պայմանները... Ոնց որ իրանք մայր են, մի փոքր ավելի ընկալումը

իրանց երեխաների նկատմամբ ուրիշ ա: Ոնց որ էս առումով մի փոքր դժվար ա, բայց դժվարությունը ոչ թե ինձ հետ ինձ համար իրանց հետ աշխատելն ա, այլ ընդհանուր այ էդ բանը ընկալելը, էդ ընկալումը, էդ գենդերային զգայունընկալումը՝ կոպիտ ասած: Ու էդ առումով, օրինակ, էս տարվա սկզբին կոնֆերանս կար՝ հենց էդ գենդերազգայուն արձագանքը համավարակին, ասենք, գրության մեջ գրված էր, որ հատկապես կանանց վիճակը... Օրինակ՝ առողջապահության մասին ա խոսում, հատկապես կանանց վիճակը, բայց էն որ սենց կոնֆերանսին եկել էին, էն որ սենց կանանց մասին ընդհանրապես խոսք չկար, ու էդ պահին սենց չգիտես, չես կարա կոնֆերանսը դադարեցնես... Բայց ինքը չի խոսում կանանց մասին, ի՞նչ անես էլի էդ պահին... Դու դնես ինչ-որ պատմես սաղ, չպատմես, բայց ոնց որ դու էդքան ժամանակ չունես. երկու ժամ ա ընդամենը էդ կոնֆերանսը: Այսինքն՝ այ էդ... Դե մենք իրանց, ասում ա, խտրականության չենթարկաց... *(ուղղելով ինքն իրեն)* ենթարկում. մենք իրանց չենք առանձնացնում, բայց խնդիրը ոչ թե առանձնացնելն ա, այլ ուղղակի իրա սպեցիֆիկան հաշվի առնելն ա, ոնց որ էդ նույն հաշմանդամություն ունեցող անձանց համար, ոնց որ... էն որ սենց դու կարաս ինչ-որ անգամ էդ մատչելիություն չապահովես, ասես՝ դե մենք չենք խտրականացնում իրանց, նույն աստիճանն ա, ասենք, բայց ինքը աստիճանի կարիք չունի, ինքը թեքահարթակի կարիք ունի... Հիմա նույնը կանայք են էլի՝ «Հիմա մենք իրանց չենք խտրականացնում»... Մի փոքր էդ բանը էդ առումով ա դժվար, ու մեկ էլ, ասենք, ես չեմ սիրում, որ էս թեմաները փորձում են բանանեն՝ ինչ-որ սենց նենց վերլուծեն, էս թեմաներին նենց ագրեսիվությամբ վերաբերվեն, որ բանանեն, *(փորձում է ձևակերպել մտքերը)* ինչ-որ ուղղակի... դիտում հավաքեն... Ինչ-որ ցույց տան, որ բա տեսե՛ք՝ խնդիր կա, մենք էդ խնդրի մասին խոսում ենք...

Շուշան. էդ լրագրողի պես...

Նարե. *(շարունակելով)* հա, ասենք ես ուղղակի աշխատում եմ, ո՞նց ասեմ. հետևանքները հասկանալով աշխատեմ էլի, որովհետև հակառակը... Հակառակի դեպքում՝ եթե դու տենց չես աշխատում, ռիսկը, որ էդ մարդիկ ավելի մեծ վնասկուն են ան, ավելի մեծ ա...

Շուշան. Հա՛... Հա, այսինքն՝ ոչ թե սենց մեծ, ակտիվ արձագանքների համար հանրության կողմից, այլ առաջնահերթ էդ պատասխանատվությունը նաև կարևոր ա...

Նարե. Որովհետև հանրությունը ի՞նչ ա ուզում. ինքը սուր ինչ-որ բան ա ուզում, չէ՞, ու դա նաև լրագրողներն են ուզում, ասենք, դու իրանց ասես, որ պետը մարդ ա ծեծել, պետը, այո՛, սենց արեց, չէ՞... էդ ա պետք... էդ ա պետք, ստեղ ինձ թվում ա՝ նաև ավելի շատ բանտի ընկալման մասին ա խոսքը, որ իրանք ան ընդհատ տարիներ շարունակ էդ թեմաները տենց են մատուցվել, իրանք, այսինքն, շատ դեպքերում լրագրողը չի պատկերացնում՝ ինչի մասին կարելի ա խոսել... Ու մինչև, օրինակ, ինչ-որ հաղորդման հյուր գնալը կամ ինչ-որ հաղորդման ժամանակ ինչ-որ թեմայի մասին խոսելը, էն որ սենց որոշ ժամանակ էդ լրագրողի հետ աշխատում ես, մինչև իրան հասկացնում ես, որ էդ թեման քո թեմանէլ ա, դու կարաս քո հաղորդման ժամանակ էդ թեմայի մասին խոսես... Ու ինձ թվում ա՝ սա ավելի կարևոր ա, որ դու էդ մարդուն ներկայացնես ոչ թե որպես հրեշ, էն որ սենց մարդ ա սպանել, հիմա էլ ընդեղ ան ընդհատ տալիս ջարդում-փշրում ա, ինքն ավնասում ա անում, դու սենց իրան ներկայացնես որպես մարդ, որը ունի խնդիր, ու էդ խնդիրը քննարկես:

Էդ առումով դժվարությունը կա, որովհետև մի քիչ իրավապաշտպանները էլ են սենց էմոցիոնալ աշխատում, լրագրողներն էլ են էմոցիոնալ աշխատում ու, ասենք, երբ որ դու փորձում ես դրանից ինչ-որ էմոցիա չբխեցնես կամ ինտրիգ չբխեցնես, դա մի քիչ դժվար ա ընկալվում էլի:

«Ֆեմպատում» նախագծի շրջանակներում բանավոր պատմության մեթոդի վերաբերյալ հոդվածների թարգմանություններին կարող եք ծանոթանալ womenfundarmenia.org կայքում



ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԿԱՆԱՆՑ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԵՄՈՍՏՈՒՄ
FEMSTORY